INTERNATIONAL AND COMPARATIVE LAW CENTER - ARMENIA

ARMENIAN LEGAL CENTER
FOR JUSTICE AND HUMAN RIGHTS

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

ՀԱՅԱՏՅԱՑ ՀՌԵՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հետազոտական զեկույց

Ատելության խոսքը Ադրբեջանում. հայատյաց հռետորաբանության դրսևորումներն ու նպատակները

Հետազոտական զեկույց

Հեղինակային խումբ.

Սիրանուշ Սահակյան

Ստեփան Հասան-Ջալալյան

Դիանա Կարապետյան

Ավետիք Մեջլումյան

Զեկույցի ձևավորումը.

Աստղիկ Փիրումյան

Զեկույցը պատրաստվել է Մարդու իրավունքների և արդարադատության հայկական իրավական կենտրոնի աջակցությամբ:

Երևան, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Հետազոտության մեթոդաբանությունը 7

Գլուխ 1. Հետազոտության իրավական և պատմա-քաղաքական շրջանակը 9
1.1 Ատելության խոսքի հասկացությունը 9
1.2 Արցախի հայերի նկատմամբ ճնշումների, խտրականության և ատելության խոսքի համառոտ պատմական ակնարկ 10

Գլուխ 2. Հակահայ հռետորաբանության գերակա խոսույթները Ադրբեջանում 14
2.1 «Արևմտյան Ադրբեջան»-ի խոսույթն ու դրա հեռահար նպատակները 14
2.2 Հայկական մշակութային ժառանգության նենգափոխումը և մշակութային ցեղասպանության հռետորաբանությունը 20
2.3 Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջները 34
2.4 Հայերի նկատմամբ «անջատողականներ» և «ահաբեկիչներ» որակումները 38
2.5 Հայերի նկատմամբ այլ բնորոշումներն ու պիտակավորումը 49

Եզրահանգումներ 58
Հնարավոր իրավական գործընթացներ 61

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի պետական և հանրային հռետորաբանությունը մշտապես աչքի է ընկել ատելության խոսքի հետևողական կիրառմամբ, որը հատկապես ինտենսիվացել է 2020 թ. 44-օրյա պատերազմի շրջանում և դրա ավարտից հետո: Ատելության խոսքն ուղղված է հայերի՝ որպես էթնիկ խմբի, հայկական ինքնության, պատմության և մշակույթի դեմ՝ նպատակ ունենալով սերմանել թշնամանք և լեգիտիմացնել Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությունը: Ստորև ներկայացված են ադրբեջանական քարոզչամեքենայի ատելության խոսույթների հիմնական ուղղությունները:

Անջատողականների և անջատողականության մասին հռետորաբանություն

Ադրբեջանական պետական հռետորաբանությունը հայերին և հայ ղեկավարությանը պարբերաբար ներկայացնում է որպես «անջատողականներ»՝ նպատակ ունենալով վարկաբեկել Արցախի ժողովրդի ինքնորոշման պայքարը: Ադրբեջանը հետևողականորեն օգտագործում է այս պիտակը միջազգային կազմակերպություններում՝ Արցախի հիմնահարցը ներկայացնելու որպես իր տարածքային ամբողջականության դեմ ուղղված գործողություն:

Արևմտյան Ադրբեջանի մասին հռետորաբանություն

Ադրբեջանական քարոզչամեքենան վերջին շրջանում հատկապես շրջանառում է «Արևմտյան Ադրբեջան» եզրը, որը նպատակ ունի կեղծ պատմական փաստերի միջոցով հիմնավորել տարածքային պահանջներ Հայաստանի նկատմամբ: Միևնույն ժամանակ, Ադրբեջանի պաշտոնյաների, հանրային գործիչների, լրագրողների և փորձագետների կողմից ակտիվորեն տարածվում են հայտարարություններ, թե «արևմտյան ադրբեջանցիները» պետք է «վերադառնան իրենց հայրենիք»՝ Հայաստանին ներկայացնելով որպես պետություն, որն ապօրինի զբաղեցրել է այդ տարածքները: Այս հռետորաբանությունն ուղեկցվում է պահանջներով, որ Հայաստանը պետք է երաշխավորի ադրբեջանցիների անվտանգ վերադարձը:

Էթնիկական ատելության քարոզչություն

Նշված սուբյեկտների կողմից հայերի նկատմամբ պարբերաբար օգտագործվում են վիրավորական, նվաստացնող և բռնություն արդարացնող արտահայտություններ:

Մշակութային ցեղասպանություն

Մշակութային ցեղասպանության դրսևորումներն Ադրբեջանի կողմից ընդգրկում են հետևյալ գործողությունները.

- **Հայկական պատմամշակութային ժառանգության ոչնչացում.** Ադրբեջանի կողմից վերահսկվող տարածքներում պարբերաբար խաթարվում կամ ոչնչացվում են հայկական մշակութային հուշարձանները, եկեղեցիները, խաչքարերը:
- **Պատմական փաստերի խեղաթյուրում.** Ադրբեջանական քաղաքական հռետորաբանությունն ուղղված է հայկական մշակութային ժառանգությունը ադրբեջանական կամ ալբանական ներկայացնելու կամ այն ամբողջությամբ ժխտելու փորձերին:

Բավական է դիտարկել Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի մի քանի հրապարակային հայտարարություններ, հասկանալու համար, թե հայատյացությունն ու էթնիկ զտումների մտադրությունները որքան բարձր մակարդակում են բարձրաձայնվում և ինչպես են ուղղակի վերարտադրվում այլ մակարդակներում՝ պատգամավորների, լրատվամիջոցների և փորձագետների կողմից:

2022 թ. հոկտեմբերին, ադրբեջանական լրատվամիջոցներին տված հարցազրույցում Ալիևը հայտարարել է. *«Ղարաբաղի բնակիչները Ադրբեջանի քաղաքացիներ են, և ում դա դուր չի գալիս, կարող են հեռանալ, այլ տարբերակ չկա: ...Ադրբեջանական հասարակության մեջ ինտեգրվելուց բացի այլ տարբերակ ուղղակի չկա: Ով կընդունի, որ պետք է ապրել որպես Ադրբեջանի քաղաքացի, կարծում եմ՝ չի վղջա, իսկ եթե ինչ-որ մեկին ինչ-որ պատճառով դա հարմար չէ, կարող են իրենց համար բնակության այլ վայր ընտրել»*[1]:

Դրանից 2 տարի առաջ՝ 2020 թ. հոկտեմբերին, երբ ընթանում էր 44-օրյա պատերազմը, Ալիևը, խոսելով հայերի և հայ զինծառայողների մասին, հայտարարել է. *«Մենք նրանց շան պես ենք վռնդում: Ադրբեջանցի զինվորները նրանց շան պես են վռնդում: Ադրբեջանի դրոշը բարձրացվում է օկուպացված տարածքներում: Ադրբեջանցի զինվորները կանգնած են իրենց խրամատներում: Նրանց դիրքերը մեր ձեռքում են: Մենք վարում ենք նրանց տանկերը: Նրանց մյուս զենքերը մեր ձեռքում են, նրանց բեռնատարները մեր ձեռքում են: Մենք կատարում ենք մեր փրկության առաքելությունը և այն ավարտին կհասցնենք»*[2]:

Ալիևի թեզերն ուղղակիորեն կիրառում են լրատվամիջոցները: Օրինակ, Ադրբեջանի պետական AZ TV հեռուստաընկերության ռեպորտաժում հաղորդավարը նշել է. *«Հայաստանը համ «փախչող շան պես» փախել է պատերազմի ժամանակ, իսկ այժմ չհամաձայնվողի վիճակում է հայտնվել: ...Փորձում ես պայմաններ թելադրել բանակցություններում Հայաստան, դու կորցրել ես պատերազմը, խայտառակվել ես, ինչ պայմաններից ես խոսում, բայց մի անհանգստացի,*

1. Ղարաբաղում ապրողները կարող են հեռանալ, եթե չեն ուզում Ադրբեջանի քաղաքացիություն. Ալիև, https://www.azatutyun.am/a/32069319.html
2. President Aliyev: Azerbaijani soldiers drive them away like dogs, https://defence.az/en/news/146240/president-aliyev-azerbaijani-soldiers-drive-them-away-like-dogs

«ռազմավարի պուրակում» բավականին տեղ կա դեռ ապատ, մենք հաճույքով կհամալրենք այն հայկական տեսականիով...»[3]: Հաղորդավարի այս խոսքերն ուղիղ հղում են կատարում Ալիևի վերոնշյալ հայտարարությանը՝ հայերին շների պես քշելու մասին:

Ի դեպ, հաղորդավարի հիշատակած «Ռազմավարի պուրակ»-ը 2020 թ. պատերազմից հետո Բաքվում բացված «ժամանցի» մի վայր էր, որտեղ ներկայացված էին ոչ միայն պատերազմի ժամանակ հայերից վերցված զինվորական տեխնիկան ու գույքը, այլև՝ սպանված, վիրավոր, գերեվարված, կապկպված հայ զինվորների մանեկեններ: Բացօթյա այդ թանգարանի հանդիսավոր բացմանն անձամբ է ներկա եղել նախագահ Ալիևը և լուսանկարվել այդ տեսարանների ֆոնին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ սահմանվել է այս **հետազոտության նպատակը.** վերլուծել հայերին և հայկական երկու պետություններին առնչվող ադրբեջանական խոսույթները՝ ատելության խոսքին առնչվող միջազգային իրավական կարգավորումների և մարդասիրական իրավունքի լույսի ներքո:

Ուսումնասիրության **խնդիրներն էին.**

1. Դուրս բերել ատելության խոսքի՝ հիմնական և առավել հաճախակի խոսույթներն ու դրանց հիմնավորումները: Կարևոր է հասկանալ, թե որոնք են առանցքային թեզերը և ինչպես են դրանք արդարացվում, լեգիտիմացվում: Օրինակ, հայերի նկատմամբ դաժանությունների տարածված «հիմնավորումներից» է նրանց մարդ չհամարելը: Հայերը համակարգված կերպով ապամարդկայնացվում են՝ պաշտոնյաների, հանրային գործիչների, զանգվածային մշակույթի միջոցներով: Դա էլ խրախուսում է ադրբեջանցի զինծառայողներին՝ դաժանաբար վարվել «ոչ-մարդ» հայերի հետ:
2. Բացահայտել տարբեր պաշտոնյաների, լրատվամիջոցների և հանրային գործիչների տեքստերի միջև առկա կապերն ու փոխառնչությունները: Անհրաժեշտ է պարզել, թե Ադրբեջանի բարձրաստիճան ղեկավարության (հատկապես նախագահի) թեզերն ինչպես են վերարտադրվում ու արտացոլվում ավելի ցածր կարգի պաշտոնյաների, պատգամավորների, լրատվամիջոցների և սոցիալական մեդիայի տեքստերում:
3. Վերլուծել ռիսկային և խնդրահարույց թեզերը՝ մարդասիրական իրավունքի տեսանկյունից: Մասնավորապես.

3. Ալիևի վերջին հայատյաց ու ագրեսիվ ելույթից հետո ադրբեջանական մեդիա դաշտը նոր թափով է սկսել պատերազմի ու ագրեսիայի քարոզ անել. Տաթևիկ Հայրապետյան, https://www.aravot.am/2023/03/20/1329770/

- Միջազգային իրավակարգավորումների ինչպիսի առերևույթ խախտումներ են առկա դրանցում:
- Մարդասիրական իրավունքի ու պրակտիկայի որ հիմնարար սկզբունքներն են ոտնահարվում այդ տեքստերի միջոցով:
- Որքանով են դրանք հիմքեր ստեղծում էթնիկ զտումների, ցեղասպանության և մարդկության դեմ ուղղված այլ հանցանքների համար:

Զեկույցի առաջին գլուխն անդրադառնում է ատելության խոսքի հասկացությանը և առնչվող իրավական կարգավորումներին: Առկա է նաև համառոտ ակնարկ Արցախի հայերի նկատմամբ ճնշումների, խտրականության և ատելության խոսքի պատմական համատեքստի վերաբերյալ:

Հետազոտության արդյունքները ներկայացված են զեկույցի 2-րդ գլխում, որին հետևում են զեկույցի հիմնական եզրահանգումներն ու հնարավոր իրավական գործընթացների ու հետևանքների վերաբերյալ դիտարկումները:

Զեկույցը կարող է օգտակար լինել թեման ուսումնասիրող լրագրողների և հետազոտողների, ինչպես նաև՝ իրավապաշտպան համայնքի համար: Հավաքված հարուստ նյութը (մեջբերումներ, հղումներ տեքստերին) կարող է կիրառվել միջազգային իրավական գործընթացներ նախաձեռնելու և իրավապաշտպան այլ գործողությունների նպատակով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության մեթոդը վերոնշյալ հանրային տեքստերի ադրբեջանական խոսույթների ավանդական (բովանդակային) վերլուծությունն էր:

Ուսումնասիրվել են 2023 թ. ապրիլի 1 – 2024 թ. մարտի 31 ժամանակահատվածում հրապարակված, հանրային գրավոր և բանավոր այն տեքստերը, որտեղ անդրադարձ կա.

- Հայաստանի Հանրապետությանը (ՀՀ):
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը (ԼՂՀ):
- Հայերին՝ որպես ազգ / էթնիկ խումբ:
- Հայ զինծառայողներին / բանակին:
- Հայ պաշտոնյաներին:
- Հայկական մշակույթին (ներառյալ՝ կրոնն ու պատմությունը):
- Հայկական տարածքների և մշակութային ժառանգության հանդեպ Ադրբեջանի / ադրբեջանցիների հավակնությանը:

Տեքստերի **իմաստային վերլուծության կատեգորիաները** հետևյալն էին.

1. Վերաբերմունք, բնորոշումներ և պնդումներ.

- Հայերի՝ որպես էթնիկ խմբի,
- Հայ զինծառայողների,
- Հայ պաշտոնյաների.
  - Հատկանիշների,
  - Էության / բնույթի,
  - Վարքի մասին

2. Վերաբերմունք. բնորոշումներ և պնդումներ հայկական մշակույթի.

- Հատկանիշների,
- Էության / բնույթի,
- Կեղծ կամ գողացված լինելու,
- Ցածրակարգ լինելու մասին:

3. Վերաբերմունք, բնորոշումներ և պնդումներ.

- ԼՂՀ տարածքի պատկանելության և անջատողականության,
- Հայաստանի ինքնիշխանության և պետության լեգիտիմության,

- Հայաստանի տարածքի պատկանելության (ներառյալ՝ Ադրբեջանի տարածքային հավակնությունների),
- Ադրբեջանցիների՝ Հայաստան վերադարձի իրավունքի,
- Զանգեզուրի միջանցքի վերաբերյալ:

4. Գործողության կոչեր.

- ԼՂՀ-ն լքելու, հեռանալու,
- Հայերին վտարելու կամ բռնի արտագաղթի հարկադրելու,
- Հայերին ոչնչացնելու և նրանց նկատմամբ այլ բռնի գործողություններ կատարելու,
- ՀՀ կամ ԼՂՀ դեմ բռնի գործողություններ իրականացնելու մասին:

5. Գործողության սպառնալիքներ կամ պլաններ՝ պնդումներ այն մասին, որ

- Ադրբեջանը պլանավորում է վերադարձնել իրեն պատկանող պատմական հողերը՝ նկատի ունենալով ՀՀ ներկա տարածքը,
- Ադրբեջանը պլանավորում է ՀՀ ներկա տարածքով, առանց Հայաստանի համաձայնությունը ստանալու, միջանցք բացել դեպի Նախիջևանի երկրամաս,
- Ադրբեջանը պլանավորում է Հայաստանին մեկուսացնել տարածաշրջանային նախագծերից:

6. Ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած, վերը թվարկվածին ուղղակի կամ անուղղակի առնչվող այլ խնդիրներ:

Ուսումնասիրվել են.

- Բարձրաստիճան պաշտոնյաների և պատգամավորների ելույթներ ու գրավոր տեքստեր (հրապարակային ելույթներ, մամլո ասուլիսներ, հարցազրույցներ, հոդվածներ, այլ):
- Հանրային լայն շրջանակների վրա ազդեցություն ունեցող փորձագետների և հանրային այլ գործիչների ելույթներ, տեսակետներ:
- Լրատվամիջոցների հրապարակումներ (հոդվածներ, վերլուծություններ, հարցազրույցներ, այլ):

Որտեղ և ինչ չափով դա հնարավոր է եղել, ներկայացված են համատեքստային այլ կարևոր տվյալներ, օրինակ, այն մասին, թե ով է տվյալ խոսույթի հեղինակը կամ բարձրաձայնողը, ինչպիսի կարգավիճակ ու բնութագրիչներ ունի վերջինը, ինչ քաղաքական ու սոցիալական առնչություններ ունի գործող իշխանությունների հետ, և այլն: Հնարավորինս ներկայացված են նաև խոսույթի հանրայնացման վայրի, ժամանակի, լսարանի և այլ օժանդակ տվյալները:

ԳԼՈՒԽ 1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1.1 ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ատելության խոսքը սահմանվում է որպես արտահայտման տեսակներ, որոնք խթանում, տարածում կամ արդարացնում են բռնություն, ատելություն կամ խտրականություն անձի կամ խմբի նկատմամբ՝ նրանց ռասայական, էթնիկական, կրոնական, սեռական կամ այլ անձնական հատկանիշների հիման վրա: Սա սահմանվում է ինչպես Եվրոպայի Խորհրդի հանձնարարականներում, այնպես էլ ՄԱԿ-ի և այլ միջազգային կառույցների կողմից ընդունված փաստաթղթերում:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) 15-րդ ընդհանուր քաղաքականության հանձնարարականն ատելության խոսքը բնութագրում է որպես անձի կամ անձանց խմբի նվաստացման, անարգման կամ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելության քարոզչությունը, խթանումը կամ հրահրումը, ինչպես նաև՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ոտնձգությունը, վիրավորանքը, բացասական կարծրատիպերի տարածումը, խարանավորումը, սպառնալիքը և վերոնշյալ արտահայտման բոլոր ձևերի արդարացումը՝ պայմանավորված ռասայով, մաշկի գույնով, ծագումով, ազգային կամ էթնիկ պատկանելությամբ, տարիքով, հաշմանդամությամբ, լեզվով, կրոնով կամ համոզմունքով, սեռով, գենդերով, գենդերային ինքնությամբ, սեռական կողմնորոշմամբ և այլ անձնական հատկանիշներով կամ կարգավիճակով:

Ռասայական խտրականության վերացման կոմիտեի (ՌԽՎՀ) թիվ 35 ընդհանուր հանձնարարականի կետ 15-ը սահմանում է մի շարք գործոններ, որոնք պետք է գնահատվեն՝ որոշելու համար, թե արդյոք ատելության խոսքը հասնում է այն մակարդակին, երբ այն պետք է համարվի քրեական հանցագործություն: Այդ գործոններն են.

1. Խոսքի բովանդակությունն ու ձևը,
2. Տնտեսական, սոցիալական և քաղաքական մթնոլորտը,
3 . Բանախոսի դիրքը կամ կարգավիճակը,
4 . Խոսքի հասանելիությունը,
5. Խոսքի նպատակները:

Իսկ «Համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական և քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին» լրացուցիչ արձանագրության համաձայն, «ռասիստական կամ քսենոֆոբ նյութ» եզրը նշանակում է՝ ցանկացած գրավոր նյութ, նկար կամ գաղափարների կամ տեսությունների այլ ձևով արտահայտում, որը քարոզում, խթանում կամ հրահրում է ատելություն, խտրականություն կամ բռնություն անձի կամ անձանց խմբի նկատմամբ՝ պայմանավորված ռասայական պատկանելությամբ, մաշկի գույնով, ծնունդով կամ ազգային կամ էթնիկ ծագումով, ինչպես նաև կրոնով:

Արդարադատության միջազգային դատարանի որոշումները

2021 թ. սեպտեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետությունը հայցադիմում է ներկայացրել ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան ընդդեմ Ադրբեջանի՝ «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային կոնվենցիայի» շրջանակներում: 2021 թ. դեկտեմբերի 7-ին դատարանը հրապարակել է ներկայացված հրատապ միջոցների վերաբերյալ իր որոշումները:

Մասնավորապես, Դատարանը պարտավորեցրել է Ադրբեջանին.

1. Պաշտպանել 2020 թ. հակամարտությամբ պայմանավորված Ադրբեջանում հայտնված և պահվող անձանց բռնությունից և մարմնական վնասվածքներից և ապահովել նրանց անվտանգությունն ու օրենքի առջև հավասարությունը,
2. Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու հայերի դեմ ուղղված ռասայական խտրականության և ատելության հրահրումն ու խթանումը, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և պետական հաստատությունների կողմից,
3. Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու և պատժելու հայկական մշակութային ժառանգության, այդ թվում՝ եկեղեցիների և պաշտամունքի այլ վայրերի, հուշարձանների, ուղենիշային պատկերների, գերեզմանատների և այլ ցուցանմուշների հանդեպ վանդալիզմի և պղծման գործողությունները:

1.2 ԱՐՑԱԽԻ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՃՆՇՈՒՄՆԵՐԻ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Թե՛ 1918-1920 թթ. գոյություն ունեցած Ադրբեջանի, թե՛ Խորհրդային Ադրբեջանի վարչակազմի քաղաքականությունը մշտապես ուղղված է եղել Արցախի բնիկ հայ ժողովրդի բռնի կամ «խաղաղ» տեղահանմանը՝ իրենց դարավոր հայրենիքից:

1918 թ. մայիսի 28-ին Թիֆլիսում իր անկախությունն է հռչակում Ադրբեջանի Հանրապետությունը:

1918 թ. մայիսի 25-ին թուրք զորահրամանատար, գեներալ-լեյտենանտ Նուրի փաշան (Էնվեր փաշայի կրտսեր եղբայրը) Գանձակում ստեղծում է Կովկասյան իսլամական բանակ՝ բաղկացած 5000-անոց օսմանյան կանոնավոր զորամիավորումից, անդրկովկասյան թյուրք-թաթարների (հետագայում՝ անվանակոչված ադրբեջանցիներ) անկանոն զորքերից և փոքրաքանակ դաղստանցիներից:

1918 թ. սեպտեմբերի սկզբներին Կովկասյան իսլամական բանակը Նուրի փաշայի հրամանատարությամբ գրավում է Բաքուն[4] և այնտեղ իրականացնում 30.000-ից ավելի հայերի կոտորած[5]:

Գանձակում հաստատված Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը սեպտեմբերի 18-ին Գանձակից տեղափոխվում է Բաքու[6]: Հաստատվելով Բաքվում՝ նորահռչակ Ադրբեջանի Հանրապետության իշխանությունը, հիմնվելով Նուրի փաշայի հրամանատարությամբ գործող Կովկասյան իսլամական բանակի ռազմական աջակցության վրա, սկսում է պահանջներ ներկայացնել Արցախի նկատմամբ՝ պնդելով, որ Արցախը Ադրբեջանի անբաժանելի մասն է և արցախահայությունը պետք է ճանաչի Ադրբեջանի Հանրապետության իշխանությունը:

Արցախահայությունն իր կողմից ժողովրդավարական ճանապարհով ձևավորված վարչակազմի՝ Արցախի Ժողովրդական կառավարության միջոցով կտրականապես մերժում է Ադրբեջանի պահանջները:

Ադրբեջանի իշխանությունը դիմում է ուժի՝ արցախահայությանն ահաբեկելու նպատակով: Ադրբեջանի Հանրապետության կառավարության որոշմամբ, Արցախի և Զանգեզուրի ժամանակավոր գեներալ-նահանգապետ նշանակված Խոսրով բեկ Սուլթանովի[7] հրամանով, Արցախի վարչական կենտրոն Շուշի քաղաքի մահմեդականները 1919 թ. հունիսի 4-ին հանկարծակի հարձակվում են քաղաքի հայկական թաղամասի վրա: Չնայած հայերի դիմադրությանը, նրանց հաջողվում է գրավել Շուշիի հայկական թաղամասը:

Հաջորդող օրերին թուրք-թաթարաքրդական զինված խմբավորումները հարձակվում և կողոպուտի են ենթարկում Արցախի մի շարք հայկական գյուղեր: Խ. բեկ Սուլթանովի հրամանով սպանվում են 700 բնակիչ ունեցող հայկական Ղայբալիշեն գյուղի 602 բնակիչ, փրկվում են միայն 11 տղամարդ և 87 կին ու երեխա: Ավերվում են մի շարք ձեռնարկություններ[8]:

Նման դեպքերը 1918-1920 թթ. գոյություն ունեցած Ադրբեջանի վարչակազմի օրոք կրել են պարբերական բնույթ[9]:

Ցեղասպան և հայատյաց քաղաքականությունն Ադրբեջանի վարչակազմը շարունակել է նաև խորհրդային կարգերի հաստատումից հետո: Սակայն, եթե 1918-1920 թթ. գոյություն ունեցած Ադրբեջանի վարչակազմն իր հայատյացությունն իրագործել է զենքի գործադրմամբ՝

---

4. Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999, էջ 205: 1918 թ. հուլիսի 22-ից մինչև 1919 թ. հունիսի 5-ը Եղիշե Իշխանյանը հանդիսացել է Արցախի ժողովրդական կառավարության առաջին նախագահը (այժմ՝ վարչապետ), միաժամանակ ներքին և արտաքին գործերի առաջին կառավարիչը (այժմ՝ ներքին և արտաքին գործերի նախարար):

5. Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ., պատմական ակնարկ, Երևան, 2008, էջ 144: 1918 թ. հուլիսի 22-ից մինչև 1919 թ. հունիսի 5-ը Հարություն Թումյանը հանդիսացել է Արցախի ժողովրդական կառավարության զինվորական գործերի առաջին կառավարիչը (այժմ՝ պաշտպանության նախարար):

6. Թումյան Հ., նույն տեղում:

7. Нагорный Карабах в 1918-1923 гг., сборник документов и материалов, отв. ред. проф. В. Микаелян, Ереван, 1992, док. N 38, с. 62.

8. Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 228:

9. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 29-35; Нагорный Карабах в 1918-1923 гг., сборник документов и материалов, док. N 257, с. 37-380.

նպատակ ունենալով «մաքրել» Արցախը նրա բնիկ ժողովրդից՝ հայերից, ապա Խորհրդային Ադրբեջանի բոլոր ժամանակների ղեկավարությունը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) նկատմամբ թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ գիտակրթական, թե՛ հոգևոր-մշակութային ոլորտներում իր միտումնավոր հակահայկական քաղաքականությունն իրականացրել է «փափուկ ուժի» միջոցով՝ գլխավոր նպատակ ունենալով փոխել ժողովրդագրական պատկերն Արցախում՝ հօգուտ ադրբեջանցիների: Ի դեպ, վերջիններս մինչև 1936 թ. ներառյալ կոչվում էին թյուրքեր, իսկ դրանից հետո սկսեցին կոչվել ադրբեջանցիներ[10]:

Նման քաղաքականության իրագործման մասին բացահայտ խոստովանել է Ադրբեջանի նախկին նախագահ, 1969-1982 թթ. Խորհրդային Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Հեյդար Ալիևն իր հարցազրույցներից մեկի ժամանակ: Խոսելով Ադրբեջան-Արցախ հակամարտության մասին՝ նա, մասնավորապես, ասել է. *«Լեռնային Ղարաբաղի խնդիրը ծագել է 1988 թվականին, սա նոր խնդիր չէ: Այսինքն այն սուր հակամարտություն է: Բայց այս խնդիրը շարունակվում է 20-րդ դարի սկզբից սկսած... Անգամ խորհրդային ժամանակաշրջանում նորմալ չէր... Սակայն, չնայած դրան, մենք վերահսկում էինք իրավիճակը Լեռնային Ղարաբաղում:*

Ինչի՞ շնորհիվ: Նախ, իհարկե, խորհրդային համակարգն ինքն էր դա թույլ տալիս: Երկրորդ՝ ես խոսում եմ այն ժամանակաշրջանի մասին, երբ ես առաջին քարտուղար էի,... փորձել եմ փոխել այնտեղ (ԼՂԻՄ-ում – խմբ.) ժողովրդագրական պատկերը:

Լեռնային Ղարաբաղը բարձրացրել է այնտեղ ինստիտուտ, ԲՈՒՀ բացելու հարցը: Մեկ մոտ բոլորը դեմ էին դրան: Ես մտածեցի, որոշեցի բացել: Բայց պայմանով, որպեսզի լինի երեք բաժին՝ ադրբեջանական, ռուսական և հայկական: Բացեցինք: Հարակից շրջանների ադրբեջանցիներին մենք ուղարկել ենք ոչ թե Բաքու, այլ՝ այնտեղ:

Բացել ենք այնտեղ կոշիկի մեծ գործարան: Բուն Ստեփանակերտում աշխատուժ չկար: Մարզը շրջապատող վայրերից ադրբեջանցիներին ուղարկել ենք այնտեղ: Այդ և այլ եղանակներով ես ձգտել եմ, որպեսզի Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիներ շատ լինեն, իսկ հայերի թիվը կրճատվի:

Նրանք, ովքեր այդ ժամանակ աշխատել են Լեռնային Ղարաբաղում, գիտեն այդ մասին: Ամեն դեպքում, շնորհիվ իմ կամքի, այլ հատկանիշների իմ խոսքն օրենք է եղել նրա (ԼՂԻՄ-ի – խմբ.) ղեկավարության համար:»[11]:

---

10. Алекперли Ф., Национальная идеология Азербайджана: кто мы, от кого произошли и куда идем?, 08.08.2009, https://archive.zerkalo.az/2009-08-08/politics/1630p1-read: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի հանդիպումը Ադրբեջանի մտավորականության ներկայացուցիչների հետ, նախքան Ադրբեջանի Սահմանադրության ընդունումը 1995 թ. նոյեմբերի 12-ին: Սահմանադրության մեջ ամրագրելու նպատակով հանդիպման ժամանակ քննարկվել է, թե ովքե՞ր են իրենք և ո՞րն է իրենց լեզուն, https://www.youtube.com/watch?v=ySvhJcuDrL0&t=815s, դիտել 13ր. 25վ. – 14ր. 00վ. հատվածը:

11. “Heydar Aliyev heritage” international online library, встреча президента Азербайджанской Республики Гейдара Алиева по случаю дня национальной печати с учредителями Бакинского клуба прессы – президентский дворец, 22 июля 2002 года, https://lib.aliyevheritage.org/ru/95282450.html; Газета “Эхо”, N 138, Баку, 24.07.2002, https://archives.echo.az/?p=14309; Газета “Бакинский рабочий”, N 139, Баку, 25.07.2002, с. 2.

Խորհրդային Ադրբեջանի վարչակազմի հակահայկական, խտրական քաղաքականությունը համակարգային կերպով դրսևորվել է ԼՂԻՄ-ի հանրային կյանքի բոլոր բնագավառներում: Ինչպես նշում է Վ. Խոջաբեկյանը, խորհրդային շրջանում ԼՂԻՄ-ում աշխատանքի վարձատրության չափանիշ է ծառայել ոչ թե աշխատանքային գործունեությունը, այլ ազգային պատկանելությունը: Գյոգչայի կարի ֆաբրիկայի, Շուշիի ու Աղդամի կառույցների ադրբեջանցի բանվորների միջին աշխատավարձը երկու անգամ գերազանցել է Ստեփանակերտի և ԼՂԻՄ-ի մյուս շրջանների կարի ֆաբրիկաներում ու կառույցներում աշխատող բանվորների միջին աշխատավարձի չափերին[12]:

ԼՂԻՄ-ի ինքնավարության սկզբնական տարիներին մարզը կապված է եղել Խորհրդային Հայաստանի մշակութային կազմակերպությունների հետ, կազմակերպվել են համատեղ միջոցառումներ: Մարզում տպագրվել են հայերեն դասագրքեր, գրական հանդես, երիտասարդական թերթ, և այլն: Սակայն *«... աստիճանաբար վերացան այս բոլորը: Անբեկանելի կարգով մարզի առողջապահությունն ու ժողովրդական կրթությունը պետք է մասնագետներ ստանային ուղի Բաքվից, և այդ մասնագետներն էլ պետք է լինեին միայն ադրբեջանցիներ: Մարզի հայկական դպրոցը երկաթե վարագույրով անջատվեց մայր Հայաստանի դպրոցական կյանքից»*[13]:

Խորհրդային Ադրբեջանի վարչակազմի խտրական քաղաքականությունը ԼՂԻՄ-ի բնակչության մեծամասնությունը կազմող, ազգությամբ հայերի հանդեպ իրականացվել է նաև թե գյուղատնտեսության, թե արտադրության, թե շինարարության և թե մի շարք այլ բնագավառներում:

Այսպիսով, Ադրբեջանի թե նախախորհրդային, թե խորհրդային շրջանի վարչակազմերը բռնի և ոչ բռնի մեթոդներով իրականացրել են հազարամյակների հայկական պատմություն ունեցող Արցախը նրա բնիկ ժողովրդից՝ հայերից «մաքրելու» էթնիկ զտման քաղաքականություն: ԼՂԻՄ-ը փաստացի դարձել էր Խորհրդային Ադրբեջանի գաղութային կցորդը[14]:

12. Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991, էջ 51:
13. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 255:
14. Խոջաբեկյան Վ., նշվ. աշխ., էջ 60:

2.1 «Արևմտյան Ադրբեջան»-ի խոսույթն ու դրա հեռահար նպատակները

«Արևմտյան Ադրբեջան» եզրն առաջին անգամ օգտագործվել է Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիևի կողմից: 1998 թ. դեկտեմբերի 11-ին «Իսլամական քաղաքակրթությունը Կովկասում» միջազգային սիմպոզիումի մասնակիցների մեծ խմբի հետ հանդիպման ժամանակ ունեցած իր ելույթում Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը, մասնավորաբար, հայտարարել է. *«Տարածքը, որն այժմ կոչվում է Հայաստան, Արևմտյան Ադրբեջանն է, դա Իրևանի, Գոյչայի, Զանգիբասարի, Զանգեզուրի մահալներն են, այդ բոլորը եղել է ադրբեջանցիների, մահմեդականների բնակության վայրը:*

Ցավոք սրտի, մուսուլմանները վտարվել են այդ տարածքներից, այժմ այնտեղ ոչ մի մահմեդական չի մնացել: Դա հայկական ապգայնականության, հայկական ծայրահեղականության, հայկական շովինիստական քաղաքականության արդյունքն է:»[15]:

Երկրորդ անգամ նա այդ մասին հրապարակային հայտարարել է 1999 թ. փետրվարի 9-ին՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության 75-ամյակի պետական հանձնաժողովի նիստում. *«Ես ստորագրել եմ հրամանագիր Նախիջևանի Ինքնավար Հանրապետության ձևավորման 75-ամյակի կապակցությամբ: ...Դեռևս Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության վարչապետ Ֆաթալի խան Խոյսկու 1918-1919 թթ. նամակից մենք իմանում ենք Իրևանի խանությունը, Իրևանը Հայաստանին փոխանցելու մասին:*

Այդ պրոցեսը շարունակվել է նաև խորհրդային իշխանության հաստատումից հետո: Դրա արդյունքում Հայաստանին փոխանցվել է նաև Զանգեզուրի շրջանը, չնայած նրան, որ այն հանդիսանում է հնագույն ադրբեջանական հող:...

Հայաստանի ներկայիս տարածքը հանդիսանում է ադրբեջանական հող: Այո, այդ մասին նշված է իմ կողմից ստորագրված հրամանագրում: Իրևանի խանության պատմությունը հայտնի է:... Դուք՝ պատմաբաններդ, դա պետք է հետևողականորեն ապացուցեք:

Եվ ապագայում անհրաժեշտ է ստեղծել այնպիսի գործեր, որպեսզի դրանք անընդհատ, հետևողական ձևով ապացուցեն այն հողերի պատկանելիությունը Ադրբեջանին, որտեղ այժմ գտնվում է Հայաստանը: Մենք պետք է դա անենք: Մենք պետք է ճանապարհ բացենք ապագա սերունդների համար:»[16]:

Մինչև 2020 թվականը Ադրբեջանի վարչակազմի հռետորաբանության մեջ հիմնականում բացակայում էր «Արևմտյան Ադրբեջան»-ի մասին խոսույթը:

---

15. Выступление президента Азербайджанской Республики Гейдара Алиева на встрече с большой группой участников Международного симпозиума «Исламская цивилизация на Кавказе», 11 декабря 1998 года, https://lib.aliyevheritage.org/ru/36745659.html.

16. Вступительное слово и заключительная речь Президента Азербайджанской Республики Гейдара Алиева на заседании государственной комиссии по 75-летнему юбилею Нахчыванской Автономной Республики - 9 февраля 1999 года, https://lib.aliyev-heritage.org/ru/5091911.html.

Սակայն հարկ է նշել, որ առանց «Արևմտյան Ադրբեջան» եզրն օգտագործելու, Ադրբեջանի ղեկավարը ժամանակ առ ժամանակ շարունակել է ներկայիս Հայաստանի տարածքը համարել «հնագույն ադրբեջանական հող»: Այսպես, 2010 թ. հոկտեմբերի 14-ին Եվլախ քաղաքի N1 միջնակարգ դպրոցի նոր շենքի բացման արարողության առիթով քաղաքի հանրության ներկայացուցիչների ու դպրոցի ուսուցչական կոլեկտիվի հետ հանդիպման ժամանակ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարել է. *«Ես բավմիցս ասել եմ, որ այսօրվա Հայաստանը՝ քարտեզի վրա Հայաստանի Հանրապետություն կոչվող տարածքը, վաղեմի ադրբեջանական հող է: Սա է ճշմարտությունը:*

Իհարկե, Զանգեզուրը, Իրևանի խանությունը դրանք մեր հողերն են: Ադրբեջանցիներն այնտեղ ապրել են դարեր շարունակ: Հայերն ապրել են որոշակի շրջաններում: Սակայն 19-րդ դարում տեղի է ունեցել նրանց կանգվածային վերաբնակեցումը: Ինչպե՞ս կարող է լինել, որ 1918 թվականին Երևանի հռչակումը Հայաստանի մայրաքաղաք տեղի է ունեցել Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կառավարության որոշմամբ:

Եթե այդ շրջանները պատկանում էին այսպես կոչված «Մեծ Հայաստան»-ին, ապա ինչո՞ւ են մեզանից թույլտվություն խնդրել: ...Մեր երեխաները պետք է իմանան այս ամենը, նրանք պետք է իմանան, որ այսօրվա Հայաստանը գտնվում է բուն ադրբեջանական հողերի վրա:»[17]*:*

«Արևմտյան Ադրբեջան» եզրը սկսեց կրկին ակտիվորեն շրջանառվել 2020 թ. 44-օրյա պատերազմի ավարտից շուրջ երկու տարի անց:

2022 թ. օգոստոսին Ադրբեջանի փախստականների միությունը վերափոխվել է «Արևմտյան Ադրբեջանի համայնք»-ի: Նույն թվականի դեկտեմբերի 12-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Բաքվում գտնվող «Արևմտյան Ադրբեջանի համայնք»-ի շենք կատարած այցելության ժամանակ, մասնավորաբար, հայտարարել է. *«...Վստահ եմ, որ գալու է այն օրը, երբ Արևմտյան Ադրբեջանի մեր հայրենակիցները, նրանց հարազատները, երեխաներն ու թոռները կվերադառնան մեր պատմական հողը՝ Արևմտյան Ադրբեջան: Ես վստահ եմ, որ գալու է այդ օրը, և արևմտյան ադրբեջանցիները մեծ ոգևորությամբ ու ոգեշնչված կվերադառնան իրենց հայրենի հողերը:...*

Արևմտյան Ադրբեջանը մեր պատմական հողն է: Դա հաստատում են բազմաթիվ պատմական փաստաթղթեր, պատմական քարտեզներ, մեր պատմությունը: Բայց, ցավոք, հայերը հողին են հավասարեցրել և ավիրել մեր բոլոր պատմական ու կրոնական հուշարձաններն Արևմտյան Ադրբեջանում: ...Մենք լավ գիտենք, որ ադրբեջանական ժողովուրդը պատմության ընթացքում ապրել է ներկայիս Հայաստանի տարածքում:...

Խորհրդային իշխանության թույլտվությամբ թե՛ Ղարաբաղում և թե՛ այն ժամանակվա Հայաստանի Հանրապետությունում սկսվել է հերթական հանցագործությունը մեր ժողովրդի դեմ:

---

17. Президент Ильхам Алиев принял участие в открытии нового здания средней школы номер 1 в городе Евлах, 14.10.2010, https://azertag.az/ru/xeber/prezident_ilham_aliev_prinyal_uchastie_v_otkrytii_novogo_zdaniya_srednei_shkoly_nomer_1_v_gorode_evlah-733395.

Ադրբեջանցիներին արտաքսել են իրենց պատմական հողից՝ Արևմտյան Ադրբեջանից:...»[18]:

2022 թվականից սկսած՝ մինչ օրս, Իլհամ Ալիևն ու Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնատար անձինք իրենց հրապարակային խոսքում պարբերաբար հիշատակում են «Արևմտյան Ադրբեջան» եզրը՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքը:

«Արևմտյան Ադրբեջան»-ի հռետորաբանությունն ուղղված է Հայաստանի տարածքային ամբողջականությունը կասկածի տակ դնելուն և տարածքային նոր պահանջների ձևավորմանը: Ադրբեջանում պարբերաբար պնդվում է, որ Հայաստանի տարածքը, ներառյալ նրա մայրաքաղաք Երևանը, պատմականորեն պատկանել է ադրբեջանցիներին: Այս պնդումները հիմնված են պատմական փաստերի ընտրողական մեկնաբանության և մշակութային ժառանգության կեղծ ներկայացման վրա:

Ադրբեջանը փորձում է միջազգային հանրությանը ներկայացնել իրավիճակն այնպես, որ Հայաստանի դիրքը դիտարկվի ոչ թե որպես զոհ, այլ որպես «օկուպանտ»: «Արևմտյան Ադրբեջան» խոսույթը ծառայում է Հայաստանի տարածքների նկատմամբ Ադրբեջանի ապագա հավակնությունների քաղաքական-իրավական և գաղափարական հիմնավորումներին: Պարբերաբար արվում են հայտարարություններ, թե Հայաստանի ներկայիս սահմաններն «անարդար» ձևով են ստեղծվել, իսկ «Արևմտյան Ադրբեջանի» ադրբեջանցի բնակիչները պետք է վերադառնան իրենց «պատմական» հայրենիքը: Այսպիսով, տարածքային պահանջները մատուցվում են որպես «արդարության վերականգնում»:

Հայաստանի՝ որպես «Արևմտյան Ադրբեջանի» տարածք ներկայացնելը նաև ուղղված է ադրբեջանական հասարակության մեջ հայերի նկատմամբ թշնամանքի արմատավորմանը: Այն դառնում է հասարակական կարծիքի ձևավորման հիմք, որտեղ հայերն ընկալվում են որպես ոչ թե հարևան ժողովուրդ, այլ «օկուպանտներ», «հակառակորդներ» և «թշնամիներ»:

Այսպիսով, «Արևմտյան Ադրբեջան»-ը Ադրբեջանի հակահայկական և նվաճողական ծրագիր է, որի նպատակը Հայաստանի Հանրապետության տարածքի օկուպացումն ու ադրբեջանցիներով վերաբնակեցումն է: «Արևմտյան ադրբեջանցիների» վերադարձի պահանջը ոչ միայն նպատակ ունի առաջ մղելու պատմական հողերի վերադարձի գաղափարը, այլև խարխլելու Հայաստանի գոյության հիմքերը: Այս խոսույթը նպատակ ունի հիմնավորելու այն գաղափարը, որ Հայաստանի ներկայիս տարածքը պատմականորեն պատկանում է Ադրբեջանին՝ ստեղծելով «իրավունքների» և «վերադարձի» պահանջներ, որոնք կարող են հանգեցնել Հայաստանի տարածքային ամբողջականությունը կասկածի տակ դնելուն: «Արևմտյան ադրբեջանցիների» վերադարձի պահանջը ոչ միայն նպատակ ունի պատմական հողերի վերադարձի գաղափար առաջ մղելու, այլև խարխլելու Հայաստանի գոյության հիմքերը՝ ՀՀ տարածքում հաստատելով ադրբեջանական ներկայություն և իրավունքներ:

---

18. Президент Ильхам Алиев ознакомился с условиями, созданными в административном здании Общины Западного Азербайджана, 24.12.2022, https://azertag.az/ru/xeber/prezident_ilham_aliev_oznakomilsya_s_usloviyami_sozdannymi_v_administrativnom_zdanii_obshchiny_zapadnogo_azerbaidzhana__obnovleno_3_video-2423267.

Համաձայն 1979 թ. հունվարի 17-24-ը ԽՍՀՄ-ում անցկացված նախավերջին մարդահամարի[19] տվյալների՝ 1979 թ. հունվարի 17-ի դրությամբ Խորհրդային Հայաստանում ադրբեջանցիների թվաքանակը կազմել է 160.841 մարդ[20]:

Համաձայն 1989 թ. հունվարի 12-19-ը ԽՍՀՄ-ում անցկացված վերջին մարդահամարի[21] տվյալների՝ 1989 թ. հունվարի 12-ի դրությամբ Խորհրդային Հայաստանում ադրբեջանցիների թվաքանակը կազմել է 84.860 մարդ[22]:

Սակայն հարկ է նշել, որ ԽՍՀՄ-ում անցկացված վերջին մարդահամարի տվյալները Խորհրդային Հայաստանում ադրբեջանցիների և Խորհրդային Ադրբեջանում հայերի թվաքանակի վերաբերյալ չեն կարող արժանահավատ լինել, քանի որ 1988 թ. սկսված արցախյան շարժման հետևանքով ինչպես մեծ թվով հայեր հեռացել էին Խորհրդային Ադրբեջանից, այնպես էլ նույն չափ ադրբեջանցիներ հեռացել էին Խորհրդային Հայաստանից:

Խորհրդային տարիներին ադրբեջանցիները հիմնականում բնակվել են Երևանում, Սյունիքի, Գեղարքունիքի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Արարատի, Վայոց ձորի, Արմավիրի մարզերում:

Խորհրդային Հայաստանում ապրող, սակայն 1988 թ. սկսված արցախյան շարժման հետևանքով իրենց տները լքած 14.5 հազար ադրբեջանցի ընտանիքներին Հայաստանում թողած իրենց անշարժ և շարժական գույքի համար Խորհրդային Հայաստանի կառավարությունը վճարել է 110 միլիոն դոլարին համարժեք փոխհատուցում: Հայաստանը լքած ադրբեջանցիների մի մասը փոխանակել է իր բնակարանը կամ առանձնատունն Ադրբեջանում ապրող, սակայն 1988 թ. շարժման հետևանքով հարկադրված Հայաստան տեղափոխված հայերի բնակարանների կամ առանձնատների հետ[23]:

Մինչդեռ Խորհրդային Ադրբեջանից բռնի տեղահանված ավելի քան 475.000 հայերը մինչ օրս որևէ փոխհատուցում չեն ստացել Ադրբեջանից[24]:

Ներքևում բերված օրինակներից մեկում Քամիլ Մեմմեդովի պնդումը Խորհրդային շրջանում «հողերի տրման» մասին արմատավորում է այն կարծիքը, որ Հայաստանի գոյությունը հիմնված է «գողացված» տարածքների վրա՝ նպատակ ունենալով ստեղծել ատելության և վրեժխնդրության զգացում ադրբեջանական լսարանի մեջ:

---

19. Численность и состав населения СССР по данным всесоюзной переписи населения 1979г., Статистический сборник / Центральное статистическое управление СССР, Москва, 1984, с. 3, https://istmat.org/files/uploads/17649/chislennost_i_sostav_naseleniya_sssr_1984.pdf.
20. Там же, с. 134; Всесоюзная перепись населения 1979 года, Национальный состав населения по республикам СССР, Армянская ССР, https://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_79.php?reg=13.
21. Федеральная служба государственной статистики Российской Федерации, Всесоюзная перепись населения 1989 года, https://shorturl.at/Y9JbL; https://www.statmuseum.ru/ru/cbook/statistika-sssr/perepis-perestroyki/.
22. Всесоюзная перепись населения 1989 года, Национальный состав населения по республикам СССР, Армянская ССР, https://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_89.php?reg=13.
23. Նույն տեղում:
24. Ադրբեջանից տեղահանված հայերն Ալիևին հակադարձում են 32 տարի առաջ ստորագրած պայմանագրերով, 13.04.2021, https://arm.sputniknews.ru/20210413/adrbejanic-texahanvac-hayern-alievin-hakadardzumen-32-tari-araj-storagrac-paymanagrov-27149623.html:

1. Ալիևի հարցազրույցը տեղական հեռուստատեսություններին, Արցախի լիակատար օկուպացիայից հետո:

Գաղտնիք չէ, որ 20-րդ դարում Ադրբեջանի հողերը մաս-մաս տրվեցին Հայաստանին: 1918 թվականին Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության ստեղծումից մեկ օր անց, ցավոք սրտի, Երևան քաղաքը հանձնվեց Հայաստանին: Սակայն դրա համար պատճառ չկար: Սա Ադրբեջանի հնագույն քաղաքն է: Ադրբեջանական ժողովուրդն այնտեղ ապրել է դարեր շարունակ, և Երևանի պատմությունը, այսինքն՝ պատմական տեսքը, որն այսօր ջնջվում է, հաստատում է ադրբեջանական ճարտարապետական հուշարձանի գոյությունը, նրա դարավոր գոյությունը:

1920 թվականի ապրիլի խորհրդայնացումից հետո՝ նոյեմբերին, խորհրդային իշխանությունը Ադրբեջանից խլեց Արևմտյան Զանգեզուրի մեծ մասը և տվեց Հայաստանին: Սա նույնպես պատմական փաստ է, կան քարտեզներ, կան 20-րդ դարի սկզբի քարտեզներ: Կա Ադրբեջանի Ժողովրդական Հանրապետության քարտեզը և դրա վրա Զանգեզուրն է՝ արևելք կամ արևմուտք չկա, ամբողջ Զանգեզուրը Ադրբեջանի տարածքն է, և դա տեղի է ունեցել խորհրդային տարիներին:

Մեկ մեղադրում են, որ մենք ուզում ենք հարձակվել Հայաստանի վրա: Ես արդեն ասացի, և նորից կասեմ լրիվ անկեղծությամբ, եթե ցանկանայինք, կմտնեինք և կգնայինք մինչև վերջ: Մեր աչքի առաջ էր Ջերմուկ քաղաքը՝ մեր նախկին իրական անունով Իստիսու քաղաքը: Ո՞վ էր մեկ պահում: Մենք մտադրություն չունեինք: Մեր նպատակը մեր սահմանը պաշտպանելն էր: Պետք էր այնպիսի բլուրներ ունենայինք, որ մեր աչքերով տեսնեինք հայերի ծրագրերը:[25]

2. Արևմտյան Ադրբեջանի համայնքի վարչության նախագահ Ազիզ Ալաքբերլի[26]:

Մեր պայքարը կշարունակվի այնքան ժամանակ, մինչև չվերադառնանք Արևմտյան Ադրբեջանի հողեր, որոնք այսօր համարվում են Հայաստանի տարածք:[27]

3. Միլի Մեջլիսի նախագահի առաջին տեղակալ Ալի Հուսեյնլի[28]:

Մի օր մեր օրացույցում կհայտնվի Արևմտյան Ադրբեջան վերադարձի օրը: Մենք կարծում ենք, որ պետք է ունենանք մեր սեփական ժառանգությունը՝ ներառյալ պատմամշակութային և իսլամական-քրիստոնեական ուղղությունները:[29]

25. https://president.az/az/articles/view/63017
26. https://report.az/ru/vnutrennyaya-politika/predsedatel-obshiny-nasha-borba-budet-prodolzhena-do-teh-por-poka-my-ne-vernemsya-na-zemli-zapadnogo-azerbajdzhana/
27. https://report.az/ru/vnutrennyaya-politika/predsedatel-obshiny-nasha-borba-budet-prodolzhena-do-teh-por-poka-my-ne-vernemsya-na-zemli-zapadnogo-azerbajdzhana/

4. Պատգամավոր Թամամ Զաֆարովա[30]:

Երկրի նախագահը մեր ժողովրդին ցույց տվեց նոր նպատակ՝ սա Արևմտյան Ադրբեջանն է: Նախագահը աշխարհին հայտարարեց, որ Իրավանը, Զանգեզուրը և Գոյչան Ադրբեջանի պատմական հողերն են, և որ Ադրբեջանի ժողովուրդը երբեք չի հաշտվի այս պատմական անարդարության հետ: Այսօր Արևմտյան Ադրբեջանի հարցը մեր առջև կանգնած է որպես պետության և հասարակության առաջնահերթ խնդիր: Մենք հավատում ենք, որ մեր պետության հզորությամբ և մեր ազգային միասնությամբ մեր ժողովուրդը կմիանա մեր արևմտյան ադրբեջանական հողերին:

Արևմտյան Ադրբեջանը, ինչպես Ղարաբաղը և Արևելյան Զանգեզուրը, մեր պատմական հողն է, ինչը հաստատվում է բազմաթիվ պատմական փաստաթղթերով, պատմական քարտեզներով, մեր պատմությամբ:[31]

5. Քամիլ Մեմմեդով, Report.az թղթակից:

Հայկական պետության տարածքը, որը ստեղծվել էր Արևմտյան Ադրբեջանի հողերում, ԽՍՀՄ-ի օրոք կրկին ընդարձակվեց Ադրբեջանի հողերի հաշվին: Արդեն ի հայտ են եկել նոր իրողություններ, և այդ իրողություններում արդիական է դարձել արևմտյան ադրբեջանցիների՝ հայրենի հողեր վերադարձի հարցը, ինչպես նաև խորհրդային տարիներին հայերին «տրված» հողերի վերադարձը:

6. Sia.az լրագրող Լեման Սերաֆ:

Ադրբեջանցիները տարբեր ժամանակներում կանգվածաբար արտաքսվել են Արևմտյան Ադրբեջանի՝ այժմ Հայաստանի տարածքից՝ պայմանավորված իրենց ազգային պատկանելությամբ: 34 տարի է անցել ադրբեջանցիների վերջին տեղահանությունից՝ Հայաստանի տարածքում գտնվող իրենց հնագույն նախնիների տներից:

28. Ալիևի ղեկավարած կուսակցության անդամ է և Հակակոռուպցիոն խորհրդարանականների համաշխարհային կազմակերպության Ադրբեջանի մասնաճյուղի նախագահը: Մեջբերումը հատված է «Վերադարձ դեպի Արևմտյան Ադրբեջան. մեր նյութական և մշակութային ժառանգությունը պատմական հողերի վրա» գրքի երկրորդ հատորի շնորհանդեսի ժամանակ հնչեցված ելույթից:

29. https://ru.apa.az/sotsium/ali-guseinli-kogda-nibud-v-nasem-kalendare-poyavitsya-den-vozvrashheniya-v-zapadnyi-azerbaidzan-540231

30. Մեջլիսում անկուսակցական, անկախ պատգամավոր է, սակայն տևական ժամանակ աջակցություն է ստացել Ադրբեջանի ընդդիմադիր՝ Ամբողջ Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցության կողմից:

31. https://siyasetinfo.az/534

7. Պատգամավոր Ռասիմ Մուսաբեյով[32]:

Ադրբեջան-Հայաստան հարաբերությունների կարգավորումից հետո արևմտյան ադրբեջանցիները պետք է գնան իրենց հայրենիք և այցելեն գերեզմաններ, որոնք պետք է արտացոլվեն երկկողմ համաձայնագրում: Որովհետև վերադարձը հանկարծակի գործընթաց չէ: Ուստի արևմտյան ադրբեջանցիները սկզբնական փուլում պետք է գնան Հայաստանի ներկայիս տարածք և որոշ ժամանակ այնտեղ մնալու իրավունք ստանան: Հայաստանը պետք է նրանց անվտանգության երաշխիք տա:[33]

2.2 ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՌԵՏՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Արևմտյան Ադրբեջան»-ի հռետորաբանությանը զուգահեռ, Ադրբեջանի իշխանությունների կողմից ՀՀ տարածքում թողած մշակութային արժեքների և նախկինում այնտեղ բնակված ադրբեջանցիների «իրավունքների վերականգնման» հարցը հաճախ օգտագործվում է որպես հռետորական գործիք՝ իրենց տարածքային հավակնությունների լեգիտիմացման ճանապարհին: Այս հռետորաբանությունը թույլ է տալիս Ադրբեջանի իշխանություններին ձևավորել խոսույթ, որտեղ նրանք ներկայացվում են որպես պատմական «իրավունքի» կրողներ՝ նշելով, որ իրենց մշակութային ժառանգությունը պետք է վերականգնվի, իսկ իրենց նախկին բնակավայրերի բնակիչները՝ «վերադառնան պատմական հայրենիք»: Այս գործընթացում Ադրբեջանը ներկայացնում է իր ժողովրդին որպես պատմական զոհ՝ իր մշակութային արժեքների կորուստների և տեղահանված բնակչության իրավունքի կորստի տեսանկյունից:

Հայկական եկեղեցիները հաճախ անվանվում են ալբանական, իսկ կոթողները վերագրվում են «ադրբեջանական մշակույթին»: Այս մոտեցումը ժխտում է հայ ժողովրդի հազարամյակների պատմական ներկայությունը տարածաշրջանում: Ադրբեջանի քաղաքական գործիչներն ու փորձագետները տարբեր առիթներով հանդես են գալիս հայտարարություններով, թե

32. Քաղաքագետ է, 4-րդ, 5-րդ և 6-րդ գումարման խորհրդարանների պատգամավոր, 2005 թվականից անկուսակցական է, ավելի վաղ եղել է մուսավաթական կուսակցության անդամ:

33. Մուսաբեյովի առաջարկած բանաձևը, որ «Հայաստանը պետք է նրանց անվտանգության երաշխիք տա», նույնպես ռազմավարական գործիք է, որն օգտագործվում է Ադրբեջանի շահերի առաջխաղացման համար: Անվտանգության երաշխիքների պահանջը մի կողմից կարող է դիտվել որպես երկկողմ հարաբերությունների կարգավորման իրավական մեխանիզմ, սակայն, մյուս կողմից, այն ցույց է տալիս Ադրբեջանի տեսլականը՝ «Արևմտյան ադրբեջանցիներին» որոշ ժամանակով ՀՀ տարածքում մշտական կամ ժամանակավոր բնակվելու իրավունք տալու մասին:

հայկական մշակութային արժեքներն իրականում պատկանում են Ադրբեջանին: Ադրբեջանը փորձում է աշխարհին ներկայացնել, թե հայերը «օտար» են տարածաշրջանում, իսկ նրանց մշակութային ժառանգությունն իբր ադրբեջանական ծագում ունի:

Հունահռոմեական աղբյուրներից ու հայ առաջին մատենագիրների երկերից հայտնի է, որ Ալբանիա կամ Աղվանք էր կոչվում Կուր գետի ձախափնյակը[34]: 428 թ. Պարսկաստանն իրեն հպատակ Արևելյան Հայաստանում վերացրեց Արշակունյաց թագավորությունը և ստեղծեց վարչատարածքային մեկ միավոր (մարզ), որը կառավարվում էր շահական արքունիքի կողմից նշանակված մարզպանի կողմից: Նման մի մարզ էլ պարսից արքունիքը ստեղծել էր Կուր գետի ձախափնյակում գտնվող բուն Աղվանք երկրից՝ նրան միացնելով Կուր գետի աջափնյակում գտնվող հայկական Արցախ և Ուտիք նահանգները[35]:

Կուր գետի ձախափնյակում կամ բուն Աղվանքում (կովկասյան Ալբանիա) աստիճանաբար գլուխ են բարձրացնում նախկին ցեղային միավորումները և բուն Աղվանքի (կովկասյան Ալբանիայի) տարածքը դառնում է բազմաթիվ ցեղային միավորումների մի խառնարան: Ամեն մեկի զբաղեցրած տարածքն այդ ցեղային միավորի անվամբ էլ կոչվում էր. հյուսիսարևելյան մասը՝ Մազքթաց կամ Չողա աշխարհ, կենտրոնական մասը՝ Բաղասական, արևմտյան մասը՝ Լփինք, և այլն:

Հետագայում՝ արաբական տիրապետության շրջանում, բուն Աղվանքի (կովկասյան Ալբանիայի) տարածքում կազմավորվում են վարչատարածքային նոր միավորումներ՝ Դերբենդի, Շիրվանի և Շաքիի ամիրայությունները[36]:

Վարչատարածքային այսպիսի բաժանումներից հետո, և հետագա բոլոր դարերում «Աղվանք» տեղանվան տակ սկսեցին հասկանալ ոչ թե Կուր գետի ձախափնյակը, այլ՝ աջափնյակը, այսինքն՝ հայկական Արցախ և Ուտիք նահանգների տարածքները:

552 թ. Կուր գետի աջափնյակում գտնվող Պարտավ քաղաքում գումարվել է ժողով և Կուրի ձախափնյակում՝ բուն Աղվանքում, ու Կուրի աջափնյակում՝ Արցախի և Ուտիքի տարածքներում գործող եպիսկոպոսությունների միավորման արդյունքում ստեղծվել է պատմության մեջ հայտնի Աղվանից կաթողիկոսությունը[37]: Աղվանից առաջին կաթողիկոս է ընտրվել Աբասը, որը Արցախի Մեծ Առանք գավառի (հիմնականում համապատասխանում է Արցախի՝ այժմ օկուպացված Մարտակերտի շրջանի տարածքին) Սուրբ Հակոբա վանքի առաջնորդն էր:

---

34. Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 29, 31; Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները Ս. Մալխասյանի, Երևան, 1987, էջ 323:

35. Ուլուբաբյան Բ., Աղվանից թագավորական տան հարցի շուրջը, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 7, Երևան, 1971, էջ 53:

36. Ուլուբաբյան Բ., Աղվանից թագավորական տան հարցի շուրջ, էջ 54:

37. Բալայան Մ., Հայ Աղվանից եկեղեցին, Ստեփանակերտ, 2009, էջ 44:

Աղվանից կաթողիկոսության առաջնորդների նստավայրը դարձավ Մեծ Հայքի Ուտիք նահանգի Պարտավ քաղաքը, որը աղբյուրների մատնանշմամբ՝ վաղնջական ժամանակներից ի վեր հայաբնակ է եղել:

Քաղաքական իրադարձությունների պատճառով, 8-րդ դարի վերջերից սկսվում է Հայ Աղվանից կաթողիկոսության «աստանդական» շրջանը: Կաթողիկոսության կենտրոնը մի քանի անգամ տեղափոխվում է: 13-14-րդ դարերում այն տեղակայվել է Արցախի Մեծ Առանք գավառի Սուրբ Հակոբա վանքում: 14-րդ դարում Աղվանից կաթողիկոսության կենտրոնը տեղափոխվել և հաստատվել է Արցախի Խաչեն գավառի (հիմնականում համապատասխանում է Արցախի՝ ներկայումս օկուպացված Մարտակերտի շրջանին) հոգևոր կենտրոն Գանձասարի վանքում: Կաթողիկոսական աթոռը Գանձասարի վանքում հաստատվելուց հետո Աղվանից կաթողիկոսությունը ձեռագրերում ու հիշատակարաններում առավելապես հայտնի է դառնում Գանձասարի կաթողիկոսություն անվամբ:

1815 թ. ռուսական կառավարության հրահանգով լուծարվել է Աղվանից կաթողիկոսությունը, և փոխարենը ստեղծվել է մետրոպոլիտություն[38]:

1836 թ. Ռուսաց կայսր Նիկոլայ I-ը հաստատել է Հայ Առաքելական եկեղեցու կանոնադրությունը, որը պատմության մեջ հայտնի է «Պոլոժենիե» անունով[39]: Փաստաթղթի համաձայն, Հայոց եկեղեցին բաժանվել է 6 թեմի, որոնցից 5-րդն Արցախի թեմն էր[40]: Կանոնադրությամբ նորաստեղծ Արցախի թեմի կենտրոն է դարձել Շուշի քաղաքը:

Ադրբեջանական պատմագրությունը «Ալբանական եկեղեցի» ձևակերպումն օգտագործել և օգտագործում է ադրբեջանաարցախյան կոնֆլիկտը հօգուտ Ադրբեջանի լուծելու, հակահայկական քարոզչության և տարածաշրջանի պատմությունը կեղծելու համար: Այդ առաքելության գլխավոր ջատագովներն էին Ադրբեջանի նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար, ակադեմիկոս Ռամիզ Մեհթիևը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս, գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն Յաղուբ Մախմուդովը, պատմական գիտությունների դոկտոր, գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ֆարիդա Մամեդովան: Վերջինս հայտարարել է, որ *«Անհնար է Ղարաբաղի հիմնախնդիրը լուծել առանց ալբանացիների»*[41]:

9-10-րդ դարերում «ուդի» էթնոնիմը դարձել է Կուր գետի ձախափնյակում գտնվող քրիստոնյա-ալբանացիների ինքնանվանումը: Ուդիների համար քրիստոնեությունը դարձել է էթնոտարբերակիչ նշան:

---

38. Մկրտումյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Երևան, 2006, էջ 206-207:

39. Указ от 11 марта 1836 года Его Императорского Величества Правительствующему Сенату об утверждении Положения «О управлении делами Армяно-Григорианской Церкви в России», с. 2, https://erevangala500.com/book/197.html.

40. Там же, с. 12.

41. Դե Վաալ Թ., Սև այգի: Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով, Երևան, 2007, էջ 223:

Ադրբեջանի ղեկավարությունը ձեռնարկել է նաև, այսպես կոչված, «Ուդի եկեղեցու» ստեղծման գործընթացը, որն իր հերթին դարձել է Ադրբեջանի ալբանական եկեղեցու ստեղծման նախերգանքը: «Ուդի եկեղեցին» դիտարկվում է որպես տարածաշրջանի պատմության կեղծման և հակահայկական քարոզչության կարևոր գործիք: Ադրբեջանի տարածքում գտնվող եկեղեցիները «ալբանացնելու» կամ «ուդիացնելու» նպատակով Ադրբեջանի վարչակազմը ստիպում է ուդիներին անխնա կերպով ջնջել հայկական եկեղեցիների հայերեն վիմագիր արձանագրությունները[42]:

Այսպիսով, «ալբանական կամ ուդիական» բնորոշմամբ, Ադրբեջանի վարչակազմը նկատի ունի հայկական Արցախ և Ուտիք նահանգներում գտնվող բոլոր պատմամշակութային հուշարձանները, եկեղեցիներն ու վանքերը, որոնք իբր պատկանում են Ադրբեջանի տարածքում ապրող խիստ փոքրաթիվ ազգությամբ ուդի քրիստոնյաներին: Դրանցից է, մասնավորապես, Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանում գտնվող Դադիվանքը, որն Ադրբեջանը համարում է «ալբանական եկեղեցի»:

Ըստ ավանդության՝ Դադիվանքը հիմնել է սուրբ Թադեոս առաքյալի հետևորդ Դադեն՝ առաջին դարում: Դադիվանքը եղել է Արցախի կրոնական ու մշակութային խոշոր կենտրոններից մեկը: Գլխավոր եկեղեցին Կաթողիկե Սուրբ Նշանն է, որը 1214 թ. կառուցել է Արցախի Հաթերք գավառի հայոց մեծ իշխան Վախթանգի կինը՝ իշխանուհի Արզուխաթունը: Այդ մասին վկայում է գլխավոր եկեղեցու հարավային պատի կենտրոնական կամարի մեջ արտաքուստ փորագրված 19 տողանոց հայերեն վիմագիր արձանագրությունը:

2021 թ. մայիսից Ադրբեջանի կողմից արգելվել է հայերի մուտքն օկուպացված Դադիվանքի տարածք:

Դադիվանքի օրինակն ընդամենը մեկն է Արցախի պատմաճարտարապետական հուշարձաններն «ալբանացնելու» կամ «ուդիացնելու» Ադրբեջանի քաղաքականության բազմաթիվ օրինակներից, որոնք կրում են համակարգային բնույթ:

Միևնույն ժամանակ, ադրբեջանական հռետորաբանությունը լիովին անտեսում է հայերի իրավունքների վերականգնումը՝ հատկապես այն համատեքստում, որ հայերը նույնպես թողել են իրենց մշակութային և նյութական արժեքները Ադրբեջանում, ներառյալ Նախիջևանում: Այդ հարցերին չանդրադառնալով՝ Ադրբեջանի իշխանություններն իրենց ներկայացնում են որպես տուժող կողմ, մինչդեռ հայերի նկատմամբ կիրառած բռնությունները և ժառանգության ոչնչացումը մնում են ստվերում: Նման միակողմանի մոտեցումը նպաստում է քաղաքական դիսկուրսի մեջ մեծամասնություն-փոքրամասնություն հավասարակշռության խախտմանը, որտեղ Ադրբեջանը փորձում է սրել հայերի նկատմամբ թշնամանքը՝ անտեսելով նրանց պատմական, մշակութային ու իրավական պահանջները:

42. Айвазян Г., Албанская церковь, удины и арцахский вопрос, 2.03.2021, https://regnum.ru/article/3204476.

Ադրբեջանի իշխանությունների կողմից շեշտադրվող մշակութային և նախկին բնակիչների իրավունքների վերականգնման պահանջները կարող են դիտարկվել որպես ավելի լայն տարածքային հավակնությունների լեգիտիմացման փորձ: Նման պահանջներով Ադրբեջանը փորձում է դաշտ պատրաստել քաղաքական պահանջների համար՝ ստեղծելով տպավորություն, թե իրենց պատմական իրավունքները խախտվել են: Ադրբեջանի իշխանությունները մշակութային ժառանգության պահպանման և վերականգնման հարցը հաճախ օգտագործում են որպես հռետորական գործիք՝ իրենց տարածքային հավակնությունների լեգիտիմացման նպատակով: Ադրբեջանի իշխանությունների հայտարարություններում մշակութային ժառանգությունը ներկայացվում է որպես բացառապես ադրբեջանական: Այսպիսի մոտեցումը հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը ներկայացնում է ոչ թե որպես ինքնուրույն արժեք, այլ որպես Ադրբեջանի «կորուստ», որն անհրաժեշտ է «վերականգնել»:

Ադրբեջանի մշակութային քաղաքականությունը՝ ուղղված հայկական ժառանգության խեղաթյուրմանը, ակնհայտորեն արտահայտվում է նաև միջազգային հարթակներում: Մասնավորապես, Ադրբեջանի իշխանությունները փորձում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի նման կազմակերպությունների միջոցով վերահսկողություն հաստատել հայկական մշակութային ժառանգության վրա: Նրանց նպատակն է ոչ միայն խեղաթյուրել հայկական ժառանգության իրական պատմությունը, այլև այն վերածել ադրբեջանական պահանջների լեգիտիմացման գործիքի[43]:

Ադրբեջանի իշխանությունների մշակութային քաղաքականությունը ծառայում է ավելի լայն քաղաքական նպատակների: Նրանք պնդում են, որ իրենց մշակութային արժեքների «վերականգնումը» պետք է ուղեկցվի այդ արժեքների գտնվելու վայրերի՝ այսինքն՝ Հայաստանի տարածքների «վերադարձով»: Այս հռետորաբանությունը մշակութային խնդիրներից անցում է կատարում տարածքային պահանջների՝ ներկայացնելով այդ պահանջները որպես պատմական արդարության վերականգնման անբաժան մաս:

Ադրբեջանը նպատակ ունի «մշակութային արդարության» հռետորաբանությունը վերածել քաղաքական պահանջների լեգիտիմացման գործիքի: Նրանք փորձում են ստեղծել պատրանք, թե ՀՀ տարածքում գտնվող մշակութային ժառանգությունը միայն ադրբեջանական է և, հետևաբար, այդ տարածքներում ադրբեջանական ինքնությունը «վերականգնելու» համար անհրաժեշտ է նրանց վերահսկողության հաստատումը:

1960 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային արժեքների պաշտպանության մասին Հաագայի կոնվենցիան պարտադրում է պատերազմական և զինված հակամարտությունների ընթացքում հարգել և պահպանել մշակութային արժեքները: Արցախի մշակութային ժառանգության «մաքրման» և «հայկական հետքը վերացնելու» կոչերը հակասում են այս սկզբունքին և կարող են դիտարկվել որպես մշակութային ցեղասպանության դրսևորում:

---

43. Ադրբեջանը դիմել է ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ Հայաստան առաքելություն ուղարկելու համար, սակայն մնացել է անարձագանք, https://iravaban.net/465629.html

1. Իլհամ Ալիևի հարցազրույցը՝ տեղական լրատվամիջոցներին:

Ցավոք, Երևան քաղաքը տրվեց Հայաստանին: Սակայն դրա համար պատճառ չկար: Սա Ադրբեջանի հնագույն քաղաքն է: Ադրբեջանական ժողովուրդն այնտեղ ապրել է դարեր շարունակ, և Երևանի պատմական տեսքը, որն այսօր ջնջվում է, հաստատում է Ադրբեջանի ճարտարապետական հուշարձանի երկար տարիների գոյությունը:

«Ցավոք, Երևան քաղաքը տրվեց Հայաստանին» պնդումը ենթադրում է, որ Երևանն ի սկզբանե պատկանել է Ադրբեջանին, ինչը հիմնավոր չէ և պատմական փաստերի խեղաթյուրում է: Նման ձևակերպումը ցույց է տալիս ՀՀ հանդեպ Ադրբեջանի տարածքային հավակնությունները, ինչն ուղղակիորեն հարցականի տակ է դնում Հայաստանի գոյության և սահմանների իրավական հիմքը: «Սա Ադրբեջանի հնագույն քաղաքն է: Ադրբեջանական ժողովուրդն այնտեղ ապրել է դարեր շարունակ» արտահայտությունը ժխտում է հայերի մշակութային և պատմական ժառանգությունը Երևանում՝ քաղաքն ամբողջությամբ ներկայացնելով որպես ադրբեջանական:

2. Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մահաբբատ Փաշաևա[44]:

Ադրբեջանի Ղարաբաղի և Արևելյան Զանգեզուրի տարածքներում կան ալբանական ժառանգության շատ հարուստ նյութական և մշակութային հուշարձաններ: Այդ հուշարձաններից 144-ը պատկանում են ալբանական դարաշրջանին: Հայերը դեռ 19-րդ դարից փորձել են յուրացնել և գրիգորյանացնել ալբանական եկեղեցիները: Որովհետև նրանք փորձեցին հավակնել ալբանական եկեղեցիներին և մեր էթնոմշակութային ժառանգությանը, որպեսզի կոծկեն իրենց՝ այստեղ չլինելու փաստը:

Փաշաևայի պնդումը, որ հայերը «յուրացրել են» ալբանական եկեղեցիները և «գրիգորյանացրել»[45] դրանք՝ սեփական ազգային ժառանգությունն ունենալու համար, պարունակում է հրահրող տարրեր՝ ազգային տարաձայնությունների ֆոնին: Նման հայտարարությունները կարող են խթանել այն տեսակետը, որ հայերը դիտավորյալ կերպով յուրացնում են այլ մշակույթների ժառանգությունը:

---

44. Հիմնականում գիտական գործունեություն է ծավալում, 2015 թվականին հաղթել է Ադրբեջանի նախագահին առընթեր Գիտության զարգացման հիմնադրամի հիմնական դրամաշնորհային մրցույթում՝ որպես ծրագրի ղեկավար:

45. Հայաստանում քրիստոնեության տարածման, ապա նաև որպես պետական կրոն հռչակման գործում մեծ ավանդ ունի Գրիգոր Լուսավորիչը: 302 թ. սկզբին Հայոց Տրդատ երրորդ Մեծ թագավորի հրովարտակով Գրիգոր Լուսավորիչը 16 նախարարների ուղեկցությամբ մեկնել է Կեսարիա, որտեղ նրան եպիսկոպոս է ձեռնադրել տեղի արքեպիսկոպոս Ղևոնդիոսը: Այսպիսով, Գրիգոր Լուսավորիչը համարվում է հայոց առաջին եպիսկոպոսապետը:

Նշված փաստերը նկատի առնելով՝ 1836 թ. մարտի 11-ին Ռուսաց կայսր Նիկոլայ I-ի հաստատած Հայ Առաքելական եկեղեցու կանոնադրությանը տրվել է հետևյալ ամբողջական անվանումը. «Положение о управлении делами Армяно-Грегорианской Церкви в России»:

Դրանից հետո ռուսական պատմագիտական գրականության մեջ հայ եկեղեցին հաճախ կոչվել է նաև «Армяно-григорианская церковь», հայերեն թարգմանաբար՝ «Հայ-Գրիգորյան եկեղեցի»:

Այսպիսով, «Գրիգորյանացնել»՝ նշանակում է հայկականացնել:

Հայերին վերագրվող մեղադրանքները՝ կապված ալբանական եկեղեցիների յուրացման և մշակութային ժառանգության գրավման հետ, անմիջականորեն նպատակաուղղված է հայերի՝ որպես էթնիկ խմբի դեմ: Այս պնդումները կարող են նպաստել հայերի նկատմամբ թշնամանքին՝ նրանց ներկայացնելով որպես մշակութային ժառանգություն յուրացնողներ և կեղծարարներ:

Հայերին վերագրվող մեղադրանքները, որ նրանք փորձել են կոծկել իրենց «չլինելու փաստը», պարունակում են նսեմացնող տարրեր: Սա ուղղակիորեն կասկածի տակ է դնում հայերի պատմական ներկայությունն այդ տարածքներում՝ նրանց ներկայացնելով որպես անհիմն պահանջներ ներկայացնող կողմ, որը փորձում է ապացուցել իր գոյությունը այլ մշակույթների զավթման ճանապարհով:

3. Ալբանա-ուդիական քրիստոնեական կրոնական համայնքի փոխնախագահ Ռաֆիկ Դանակարի[46]:

Շուրջ երեսուն տարվա օկուպացիայի ընթացքում էապես փոխվել է քրիստոնյա ալբանացիներին պատկանող կրոնական հուշարձանների մեծ մասի նախնական ճարտարապետությունը, ոչնչացվել են պատմական ապացույց համարվող շենքերի ճարտարապետական տարրերն ու էպիգրաֆիկ օրինակները: Ինչքան կեղծիքներ, ավերածություններ եղան եկեղեցիներում: 19-րդ դարից նրանք փորձեցին յուրացնել և գրիգորյանացնել ալբանական եկեղեցիները:

Եկեղեցիների և մշակութային հուշարձանների ենթադրյալ «յուրացմանն ու աղավաղմանը», վերաբերվող խոսքերը Ադրբեջանի կողմից մշակութային ժառանգության պատմության վերաշարադրման շարունակական պրակտիկայի մասն են: Հայկական եկեղեցիները ներկայացվում են որպես «ալբանական» կամ «ուդիական» ծագում ունեցող կառույցներ՝ փորձելով ջնջել դրանց հայկական ինքնությունը:

4. Մշակույթի փոխնախարար Սաադաթ Յուսիֆովա[47]:

Հայաստանում գրանցված է ավելի քան 25 հազար պատմական հուշարձան, և ցուցակում ընդգրկված իսլամական հուշարձաններից ոչ մեկը նշված չէ որպես ադրբեջանական ժառանգություն: Մենք պետք է ակտիվ լինենք միջազգային մակարդակով, գործունեություն

46. 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանը Ղարաբաղի Քարվաճառի շրջանի հայկական Դադիվանք վանքում քարոզիչ է նշանակել ուդի Ռաֆիկ Դանակարիին:

47. Տևական ժամանակ աշխատել է Ադրբեջանի նախագահի աշխատակազմում տարբեր պաշտոններում: Մեջբերումը հատված է «Վերադարձ դեպի Արևմտյան Ադրբեջան. մեր նյութական և մշակութային ժառանգությունը պատմական հողերի վրա» գրքի երկրորդ հատորի շնորհանդեսի ժամանակ հնչեցված ելույթից:

ծավալենք Արևմտյան Ադրբեջանի ժառանգությունն ուսումնասիրելու և առաջ մղելու ուղղությամբ: Նախ՝ պետք է հստակ որոշել, թե որքան են մեր մշակութային ժառանգության հուշարձանները այս տարածքներում:

Իրականում, Հայաստանում հաշվառված են իսլամական մշակույթի հետևյալ հուշարձանները.

- Հայերի՝ որպես էթնիկ խմբի,
  - Մզկիթ Թափաբաշին կառուցվել է 1687 թ. (պահպանվել է աղոթասրահը՝ կիսաքանդ վիճակում)[48]:
  - «Կապույտ» մզկիթը կառուցվել է 1766 թ. և վերակառուցվել է 1994-1998 թթ.[49]:
  - Աբաս Միրզայի (Սարդարի) մզկիթը կառուցվել է 19-րդ դարի սկզբին (պահպանվել է մույթը)[50]:
- Արարատի մարզի Արգավանդ գյուղի թուրքմենական կարակոյունլու ցեղի դամբարանը՝ կառուցված 1413 թ. հիմնականում հայ վարպետների կողմից՝ որպես տոհմական դամբարան[51]:
- Արագածոտնի մարզի Ագարակ գյուղի 17-րդ դարի պարսկական մզկիթը, որն այժմ գտնվում է կիսաքանդ վիճակում[52]:
- Չնայած նշված հուշարձանների՝ պարսկական ծագում ունենալու մասին փաստերին, այդուհանդերձ, Ադրբեջանը դրանք համարում է ադրբեջանական:

Վերոնշյալ հայտարարությունը պարունակում է մի քանի տարրեր, որոնք համապատասխանում են ատելության խոսքի միջազգային ստանդարտներին՝ հատկապես ազգային և մշակութային ժառանգության վերաբերյալ թշնամանքի սերմանման տեսանկյունից:

Յուսիֆովան նշում է, որ ՀՀ կողմից գրանցված 25,000 հուշարձանների ցանկում ընդգրկված իսլամական հուշարձանները չեն նշվում որպես ադրբեջանական: Սա միտումնավոր ներկայացվում է այնպես, իբրև թե հայկական կողմը դիտավորյալ անտեսում

48. «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հոկտեմբերի 7-ի N 1616-Ն որոշման N 1 հավելված, Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ, Կենտրոն թաղ., N 229, https://www.arlis.am/documentview.aspx?docid=56884:

49. Նույնը, N 150:

50. Նույնը, N 149:

51. Կարակոյունլուների՝ Արգավանդում գտնվող դամբարանը վերականգնման կարիք ունի, 26.03.2015, https://armenpress.am/hy/article/799349:

52. «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 29-ի N 628 որոշում, Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ, Արագածոտնի մարզ, Աշտարակի շրջանի Ագարակ գյուղ, N 5, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=36898:

կամ չի ճանաչում ադրբեջանական մշակութային ժառանգությունը: Այն, որ հայկական կողմը մեղադրվում է իսլամական մշակութային ժառանգության անտեսման և ճանաչման բացակայության մեջ, կարող է նպաստել երկու ազգերի միջև թշնամանքի խորացմանը:

Հուշարձանների և մշակութային ժառանգության վերաբերյալ հայտարարությունները ներառում են ազգային և էթնիկական տարաձայնությունների տարրեր՝ կենտրոնանալով Ադրբեջանի և Հայաստանի միջև պատմական տարածքների վերաբերյալ վեճերի վրա: Հայտարարության մեջ պարունակվող պնդումը, որ անհրաժեշտ է ակտիվ գործունեություն ծավալել Արևմտյան Ադրբեջանի մշակութային ժառանգության ուսումնասիրման ուղղությամբ, կարող է դիտարկվել որպես ենթադրյալ պատմական արդարության հաստատման կոչ, ինչն էլ իր հերթին կարող է ծառայեցվել՝ արդարացնելու համար հնարավոր ուժային հակամարտությունը:

5. Պատգամավոր Էլման Մամադով:

Մենք Ադրբեջանական հողերից քերում ու մաքրում ենք ձեր արմատները, հետքերը: Ինչպես դուք եք վռնդվել, գնացել, այնպես էլ կմաքրվեն ձեզնից մնացած կեղտոտ հետքերն ու ապօրինությունները:

Արցախի ԱԺ շենքի քանդման թեմայի շուրջ արված այս հայտարարությունը կարելի է դիտարկել որպես մշակութային ցեղասպանության արդարացում: Հայկական ժառանգությունը ոչնչացնելն ուղղակիորեն ծառայում է այն նպատակին, որ տարածաշրջանում հայկական ներկայության հետքերն ամբողջությամբ վերանան:

Սա նպատակ ունի նվաստացնելու հայ ժողովրդի պատմական, մշակութային և հավաքական ինքնությունը՝ ներկայացնելով հայերի ներկայությունն ու գործունեությունը որպես թշնամական ու ապօրինի:

Միևնույն ժամանակ, խոսքը զուգակցվում է էթնիկ զտման կոչով՝ այն հիմնավորմամբ, որ հայերը ոչ մի իրավունք չունեն ապրելու կամ որևէ հետք թողնելու Ադրբեջանի տարածքում:

6. Մերձավոր Արևելքի հետազոտական կենտրոնի ղեկավար Սադրադդին Սոլթան[53]:

Հնագետներն ու պատմությունը վաղուց հաստատել են Ղարաբաղում հայկական հետքերի բացակայությունը: Այս տարածաշրջանում հայոց լեզվով չես գտնի գեթ մեկ աշխարհագրական անուն: ԽՍՀՄ-ի ժամանակ նրանք Ղարաբաղում կառուցեցին հայերի հետ կապված մի շարք «հուշարձաններ», փորձեցին Ղարաբաղում հնագույն դարձնել իրենց պատմությունը:

53. Ադրբեջանում շատ հայտնի քաղաքական մեկնաբան է, անկախ քաղաքագետ: Մեջբերումը հատված է «Արցախի մշակութային ժառանգությունը» միջոցառման ժամանակ հնչեցված ելույթից:

Տարածաշրջանի ալբանական եկեղեցիները հայկականացնելով՝ փորձել են ցույց տալ, որ իրենք «հնագույն ժամանակներից ապրել են այս հողերում:

Սադրադդին Սոլթանի հայտարարությունը միտված է Ղարաբաղի հայկական պատմամշակութային ժառանգությունը ժխտելուն և տարածաշրջանի պատմության վերաշարադրմանը:

«Հայկական հետքերի բացակայության» մասին պնդումն անհիմն է, քանի որ Ղարաբաղի տարածքում առկա են բազմաթիվ հնագույն հայկական եկեղեցիներ, խաչքարեր և հուշարձաններ, որոնք վկայում են հազարամյակներ շարունակ տարածաշրջանում հայկական ներկայության մասին:

«ԽՍՀՄ-ի ժամանակ կառուցվել են հայերի հետ կապված հուշարձաններ» պնդման միջոցով փորձ է արվում ներկայացնելու, թե իբր հայկական մշակութային ժառանգությունն արհեստականորեն ստեղծվել է խորհրդային շրջանում, ինչը ևս անհիմն է, քանի որ Ղարաբաղի հայկական եկեղեցիների, օրինակ՝ Դադիվանքի պատմությունը հասնում է մինչև առաջին դար: «Ալբանական եկեղեցիների հայկականացում» թեզը Ադրբեջանի պետական քարոզչության հիմնական թեզերից է, որը նպատակ ունի նենգափոխելու հայկական եկեղեցիների ծագումը և դրանք ներկայացնելու որպես «ալբանական»:

Ադրբեջանի իշխանությունները ոչ միայն պնդում են «Արևմտյան Ադրբեջանի» մշակութային ժառանգության վերականգնման մասին, այլև քայլեր են իրականացնում՝ ուղղված հայկական ինքնության, մշակույթի, լեզվի ու կրթական համակարգի վերացմանը: Այս գործընթացը ձևավորում է մշակութային ցեղասպանության մի ամբողջ շղթա:

Մշակութային ցեղասպանության դրսևորումները ներառում են լեզվի, մշակույթի և կրթության համակարգերի վերացումը, որոնք տվյալ ազգի ինքնության պահպանման հիմնական բաղադրիչներն են: Հայերեն լեզվի ուսուցման արգելումը կամ խրախուսումը՝ այն փոխարինելու ադրբեջաներենով, հանդիսանում է հայկական ինքնության վերացման ուղղակի փորձ:

Խորհրդային շրջանում ադրբեջաներենի ուսուցումը ԼՂԻՄ-ում խրախուսելու քաղաքականության իրականացման մասին լավագույն վկայությունը Խորհրդային Ադրբեջանի ղեկավար Հեյդար Ալիևի պաշտոնավարման շրջանն է: Այս մասին դեռևս 2002 թ. վկայել է հենց ինքը՝ Հեյդար Ալիևը. *«Լեռնային Ղարաբաղը բարձրացրել է այնտեղ ինստիտուտ, ԲՈՒՀ բացելու հարցը: Մեկ մոտ բոլորը դեմ էին դրան: Ես մտածեցի, որոշեցի բացել: Բայց պայմանով, որպեսզի լինի երեք բաժին՝ ադրբեջանական, ռուսական և հայկական: Բացեցինք: Հարակից շրջանների ադրբեջանցիներին մենք ուղարկել ենք ոչ թե Բաքու, այլ՝ այնտեղ»*[54]:

54. "Heydar Aliyev heritage" international online library, встреча президента Азербайджанской Республики Гейдара Алиева по случаю дня национальной печати с учредителями Бакинского клуба прессы – президентский дворец, 22 июля 2002 года, https://lib.aliyevheritage.org/ru/95282450.html; Газета "Эхо", N 138, Баку, 24.07.2002, https://archives.echo.az/?p=14309; Газета "Бакинский рабочий", N 139, Баку, 25.07.2002, с. 2.

Լեզվի փոփոխությունը մշակութային ինքնության վերացման առաջին և ամենաարդյունավետ քայլն է: Շատ դեպքերում սա ոչ միայն իրավական, այլ նաև սոցիալական պրակտիկա է. երբ հայ երեխաները չեն ստանում բավարար կրթություն իրենց մայրենի լեզվով, դա դառնում է մշակութային ինքնության վերացման ուղիներից մեկը:

Համանման ձևով Հայոց ցեղասպանության ընթացքում հազարավոր հայ երեխաներ պարտադրաբար կրոնափոխ արվեցին, և նրանց դաստիարակությունը կազմակերպվեց թուրքական ընտանիքներում: Նմանօրինակ գործողությունները ցեղասպանության նշաններից են՝ ըստ Ցեղասպանության մասին կոնվենցիայի (1948 թ., Հոդված II): Կոնվենցիայի համաձայն, ցեղասպանություն է նաև «խմբի երեխաներին ուրիշ խմբին փոխանցելը», որի նպատակը տվյալ խմբի ամբողջական կամ մասնակի ոչնչացումն է:

Ադրբեջանական քաղաքականությունը բազմիցս արտահայտվել է հայտարարություններով, որոնցում կոչ է արվում ստեղծել «նոր սերունդ», որը չի սովորի հայերեն լեզու և կմեծանա Ադրբեջանի կրթական համակարգի ներքո: Այս կոչերը ոչ միայն խտրականություն են քարոզում, այլև ուղղված են հայ ժողովրդի ինքնության արմատական փոփոխությանը, ինչը ենթադրում է նաև այդ էթնիկ խմբի փաստացի վերացում:

Սա կարող է թվալ միայն կրթական հարց է, սակայն այն ունի ահռելի հետևանքներ՝ բացահայտորեն նպատակ ունենալով ջնջել հայկական ինքնությունը: Կրթական համակարգը, որը գործում է այս պայմաններում, չի ապահովում հայկական ինքնության պահպանություն, այլ հակառակը՝ ուղղված է նրան, որ երեխաները չընդունեն կամ մոռանան իրենց մշակութային արմատները:

7. Ադրբեջանի Դեմոկրատական կուսակցության նախագահ Սարդար Ջելալօղլու:

> *Ղարաբաղի այն հատվածում, որտեղ հայեր են ապրում, կարող է թույլատրվել խոսել հայերեն՝ որպես խոսակցական լեզու: Սակայն հայոց լեզվի օգտագործումը որպես պաշտոնական լեզու չի կարելի թույլ տալ: Որովհետև հայերն օգտագործում են իրենց լեզուն և գիրն անջատողականության կարգացման գործում:*

Արցախի պատմությունը կեղծելու մասին ադրբեջանական պնդումները չունեն որևէ հիմնավորում: Հազարամյակներ շարունակ Արցախի հայկականության մասին վկայում են ոչ միայն հայ, այլև՝ օտար սկզբնաղբյուրներն ու հետազոտողները:

Արցախը հանդիսանում է հին հայկական Մեծ Հայք (պատմական Հայաստան) պետության անբաժանելի մասը: Մ.թ.ա. 8-րդ դարում Արցախն Ուրտեխի կամ Ադախ անունով գտնվել է հայկական Ուրարտական պետության կազմում:

Համաձայն հունա-հռոմեական պատմիչների վկայությունների՝ պատմական Հայաստանի հյուսիսարևելյան սահմանը եղել է Կուր գետը[55]: Արցախը, կրկին ըստ նույն պատմիչների, անվանվել է Օրխիստենե: Մ.թ.ա. I – մ.թ. I դդ. հույն աշխարհագրագետ, փիլիսոփա, պատմիչ

Ստրաբոնը, մասնավորապես, գրել է. *«Կա նաև Փավենեն՝ Հայաստանի նահանգը, նաև Կոմիսենեն, նաև Օրխիստենեն, որը հանում է ամենամեծաքանակ հեծելազորը»*[56]: Հատկանշական է, որ Ստրաբոնը, հիշատակելով Հայաստանի տարբեր նահանգների անվանումները, չի մասնավորեցրել նրանցից ոչ մեկի որևէ բնութագրիչը կամ առանձնահատկությունը, իսկ Արցախի, կամ Օրխիստենեի մասին խոսելիս, նշել է, որ այն դուրս է բերում ամենաշատ հեծելազորը:

Հայոց Արշակունիների թագավորության անկումից (428 թ.) հետո հայկական լեռնաշխարհում ձևավորված առաջին պետական միավորումը V դարի վերջում Արցախում Առանշահիկների տոհմից սերված Վաչագան Բարեպաշտ թագավորի գլխավորությամբ ստեղծված թագավորությունն էր[57]:

Պետականաշինության տեսանկյունից Վաչագան թագավորի ծավալած գործունեությունը բացառիկ էր պատմական տվյալ ժամանակահատվածում: Բավական է ասել, որ նրա կառավարման օրոք աշխարհում առաջիններից մեկը, իսկ հայոց մեջ առաջին անգամ Արցախում ընդունվել է մայր օրենք՝ Սահմանադրություն, որը պատմությանը հայտնի է «Սահմանադրություն կանոնական» անունով, իսկ ժողովրդի շրջանում՝ «Վաչագան թագավորի օրենքները կամ կանոնները» արտահայտությամբ[58]:

9-11-րդ դարերում Արցախը հանդիսացել է Բագրատունիների հայկական թագավորության, իսկ 12-րդ դարում Զաքարյանների իշխանապետության մաս:

Արցախում դարավոր պետականության կերտման ընթացքում հաջորդ տիպի պետականությունը հանդիսացել է Խաչենի իշխանությունը: Առանշահիկների նախարարական, ավելի ուշ՝ 5-րդ դարի վերջում ձևավորված թագավորական տան[59] հիմքի վրա 12-րդ դարի առաջին կեսին ձևավորվեցին երկու իշխանություններ՝ Ներքին Խաչենի և Հաթերքի[60]: Դարավերջին հիշյալ երկճյուղ իշխանությանը ավելանում է երրորդը՝ Վերին Խաչենի կամ Ծարի իշխանությունը[61]: Սրանով, կարծեք թե, ավարտվեց ֆեոդալական Արցախի քաղաքական համակարգի ձևավորման բարդ ու երկարատև գործընթացը:

---

55. Dio's, Roman history, with an english translation by Earnest Cary, in nine volumes, vol. III, London, 1914, pp. 93, 95; Pliny, Natural history, with an English translation, in ten volumes, vol. II, by H. Rackham, London, 1961, pp. 355-357; Plutarch's lives, with an english translation by Bernadotte Perrin, in eleven volumes, vol. V, London, 1955, pp. 205, 207; The geography of Strabo, with an english translation by Horace Leonard Jones, in eight volumes, vol. V, London, 1961, p. 187.
56. The geography of Strabo, p. 323.
57. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Երևան, 1969, էջ 36:
58. Նույնը, էջ 65-69:
59. Նույնը, էջ 36:
60. Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 135, 145:
61. Նույնը, էջ 152:

Արդյունքում, 12-րդ դարի վերջին, Արցախում արդեն գոյություն ունեին Առանշահիկների թագավորական տոհմից սերված երեք խոշոր ու հզոր հայկական իշխանություններ, դրանք էին՝ Ներքին Խաչենի (ընդգրկել է Խոխանաբերդի շրջանը, Խաչեն և Կարկառ գետերի հովիտները և Մյուս Հաբանդ գավառի մի զգալի մասը), Վերին Խաչենի կամ Ծարի (ընդգրկել է Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղից ու Շահումյանի շրջանում գտնվող Ջերմաջուրից հյուսիս՝ մինչև Սևանա լճի արևելյան ափերը) և Հաթերքի (ընդգրկել է Տրտու (Թարթառ) գետի միջին ավազանը, այժմ էլ պահպանվող Հաթերք գյուղի շրջակայքը)[62]:

13-15-րդ դարերում Արցախը Հասան-Ջալալյանների թագավորական-իշխանական տոհմի գլխավորությամբ, դիմակայելով եկվորների ճնշումներին և պահպանելով երկրամասի պետական ինստիտուտների կենսունակությունը, երբեմն գտնվել է բացարձակ անկախ[63], իսկ երբեմն էլ հարաբերականորեն անկախ կարգավիճակում[64]:

16-րդ դարի սկզբներից մինչև 19-րդ դարի սկիզբն Արցախն իր հայկական մելիքական կառավարման վարչակարգով կրկին որոշ դեպքերում ունեցել է բացարձակ անկախ[65], իսկ որոշ դեպքերում էլ հարաբերականորեն անկախ կարգավիճակ[66]:

18-րդ դարի անգլիացի անվանի ճանապարհորդ և առևտրական Ջոնաս Հանուեյը 1727 թ. դրությամբ խոսելով Արցախի մելիքների իշխանապետության մասին՝ այն անվանել է «հանրապետության նման մի կազմավորում»[67]:

Ականավոր ճանապարհորդը, մասնավորապես, գրել է. *«Այս մարդիկ (արցախահայությունը – խմբ.), ելնելով առկա հանգամանքներից, ինքնուրույն կազմակերպվեցին հանրապետության նման մի կազմավորման մեջ...»*[68]:

1736 թ. Իրանի նորընծա շահ Նադիրը ճանաչել և վերահաստատել է Արցախի մելիքների ինքնիշխանությունը[69]՝ ստեղծելով նոր պետական կազմավորում «Խամսայի մելիքություններ» անունով:

Ռուսական կայսրությունը ևս մեծ կարևորություն է տվել Արցախի մելիքներին՝ փաստացի ճանաչելով նրանց իշխանությունը:

---

62. Նույնը, էջ 45:
63. Դիվան հայ վիմագրության, պրակ V, կազմեց Բարխուդարյան Ս., Երևան, 1982, էջ 15, 84; Миклухо-Маклай Н., Географические сочинение XIII в. на персидском языке. “Ученые записки Института востоковедения АН СССР”, т. IX, Ленинград, 1954, с. 204.
64. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Երևան, էջ 193-194:
65. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 141:
66. Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. IX, Երևան, 1987, էջ 443-444:
67. Hanway J., An historical account of the british trade over the Caspian sea with the revolutions of Persia: Containing the regin of Shah sultan Hussein, London, 1753, vol. III, p. 252; Այվազյան Ա., Արցախի հայկական բանակի հրազենը 1720-ական թվականներին, «Լուսակն», N 2, Երևան, 2010, էջ 9:
68. Hanway J., Ibid.
69. Ռաֆֆի, նշվ. աշխ., էջ 443-444:

Նադիր շահի սպանությունից (1747 թ.)[70] և Իրանի ներպետական կյանքում երկպառակության նոր շրջան սկսվելուց[71] հետո, Արցախի մելիքությունները դարձան փաստացի անկախ պետական կազմավորումներ և իրավաբանորեն (դե-յուրե) մնացին այդ կարգավիճակում ընդհուպ մինչև երկրամասի միավորումը Ռուսաստանին (1805 թ. մայիսի 14)[72], իսկ փաստացի (դե-ֆակտո) շարունակեցին պահպանել իրենց գոյությունը մինչև ռուս-պարսկական 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրի կնքումը[73]:

Արցախում պետականության հաջորդ դրսևորումը 1918-1920 թթ. գումարված արցախահայության համագումարներն ու դրանց կողմից ձևավորված Արցախի ժողովրդական կառավարություններն են:

Բանն այն է, որ 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխության հետևանքով կայսրության կազմի մեջ գտնվող բոլոր բնակավայրերում սկսվում է անիշխանություն: Դրան վերջ տալու նպատակով Արցախում գործող կուսակցությունների կողմից ընտրված ներկայացուցիչների ժողովի որոշմամբ 1917 թ. դեկտեմբերի 24-ին ստեղծվել է իշխանության մարմին, որը կոչվել է Միջկուսակցական բյուրո[74]: Արցախի շրջաններում ևս ստեղծվել են իշխանության տեղական մարմիններ[75]:

Իսկ 1918-1920 թթ. Արցախի բոլոր բնակավայրերից արցախահայության կողմից ընտրված պատգամավորների մասնակցությամբ հիմնականում Արցախի վարչական կենտրոն Շուշի քաղաքում, իսկ երբեմն նաև հարակից գյուղական համայնքներում գումարվել են թվով տասը համագումարներ՝ քննարկելու և լուծում տալու արցախահայության առջև ծառացած հրատապ խնդիրներին[76]:

Այդ համագումարների կողմից ընտրության միջոցով ձևավորվել են Արցախի ժողովրդական կառավարություններ: Յուրաքանչյուր կառավարություն ունեցել է իր անդամներն ու նախագահը: Կառավարության անդամները կոչվել են կառավարիչներ:

Ի դեմս Արցախում հրավիրված տասը համագումարների և վերջիններիս կողմից ձևավորված կառավարությունների՝ կարող ենք պնդել, որ 1918-1920 թթ. Արցախում գոյություն ունեցած իշխանությունն ունեցել է համապատասխանաբար թե՛ օրենսդիր, թե՛ գործադիր մարմիններ:

---

70. Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Երևան, 2005, էջ 380:

71. Նույնը, էջ 381:

72. Акты, собранные Кавказской археографической комиссией, т. II, Тифлис, 1868, с. 705.

73. Հասան-Ջալալյան Ս., Արցախի մելիքությունների կազմավորումն ու իրավաքաղաքական կարգավիճակը, «Հայագիտական հանդես», N 3-4, Երևան, 2013, էջ 250:

74. Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999, էջ 82: 1918թ. հուլիսի 22-ից մինչև 1919թ. հունիսի 5-ը Եղիշե Իշխանյանը հանդիսացել է Արցախի ժողովրդական կառավարության առաջին նախագահը (այժմ՝ վարչապետ), միաժամանակ ներքին և արտաքին գործերի առաջին կառավարիչը (այժմ՝ ներքին և արտաքին գործերի նախարար): Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920թթ., պատմական ակնարկ, Երևան, 2008, էջ 51-52: 1918թ. հուլիսի 22-ից մինչև 1919թ. հունիսի 5-ը Հարություն Թումյանը հանդիսացել է Արցախի ժողովրդական կառավարության զինվորական գործերի առաջին կառավարիչը (այժմ՝ պաշտպանության նախարար):

75. Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 52:

76. Իշխանեան Ե., նշվ աշխ., էջ 172-174, 177, 197, 211, 340, 394; Թումյան Հ., նշվ աշխ., էջ 114, 237, 240; Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 563, թերթ 29; ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 98; Нагорный Карабах в 1918-1923гг., сборник документов и материалов, Ереван, 1992, док. N 342, с. 486-487; Աբրահամյան Հ., 1918-1920թթ. արցախահայության համագումարների ժողովրդավարությունը, «Պատմաբանասիրական հանդես», N 3, Երևան, 2012, էջ 34:

Արցախում գոյություն ունեցած պետականության հաջորդ տեսակը վերաբերում է խորհրդային շրջանին, երբ երրորդ երկրի՝ Խորհրդային Ռուսաստանի, կուսակցական մարմնի՝ կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի կովկասյան բյուրոյի, չքննարկված և քվեարկության չդրված, ըստ էության, անօրինական որոշմամբ Լեռնային Ղարաբաղն ինքնավարության կարգավիճակով մտցվել է Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ: Վերջինս էլ ապօրինաբար ինքնավարությունը տարածել է ոչ թե աշխարհագրորեն և պատմականորեն Արցախ համարվող ամբողջ տարածքի վրա, այլ՝ դրա մի փոքր մասի վրա: Արդյունքում ձևավորվել է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը:

ԼՂԻՄ-ն ունեցել է օրենսդիր և գործադիր մարիններ՝ ի դեմս Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի և գործադիր կոմիտեի:

Արցախի տարածքում ձևավորված պետականության հաջորդ տեսակը Արցախի Հանրապետությունն է, որը հռչակվել է 1991 թ. սեպտեմբերի 2-ին, իսկ նույն թվականի դեկտեմբերի 10-ին տեղի ունեցած համաժողովրդական հանրաքվեի արդյունքում հռչակել է իր անկախությունը:

Արցախի Հանրապետությունը, ունենալով իշխանության ավանդական ճյուղերը՝ օրենսդիր, գործադիր և դատական, լիարժեքորեն բավարարել է մերօրյա պետությանը ներկայացվող պահանջներին:

Այսպիսով, Արցախի տարածքը դեռ երեք հազար տարի առաջ բնակեցված է եղել հայերով, իսկ ավելի քան 1500 տարի առաջ Արցախում ստեղծվել է հայկական պետականություն:

2.3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Արցախյան երկրորդ պատերազմի ավարտից հետո Ադրբեջանի իշխանությունները սկսել են ակտիվորեն առաջ քաշել Հայաստանի Հանրապետության նկատմամբ տարածքային պահանջներ, որոնք արտացոլում են իրենց երկարաժամկետ ռազմավարական նպատակները: Այս պահանջներն ընդգրկում են երեք հիմնական ուղղություն, որոնք լուրջ սպառնալիք են ստեղծում Հայաստանի ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և տարածաշրջանային խաղաղության համար: Դրանք ուղեկցվում են ոչ միայն քաղաքական ճնշումներով, այլև պատմական փաստերի նենգափոխմամբ և քարոզչական ակտիվ գործունեությամբ, որն ուղղված է միջազգային հանրության ընկալումներում այդ պահանջների «օրինականացմանը»:

Առաջին ուղղությունը վերաբերում է պատմական հողերի վերաբերյալ պնդումներին:

Ադրբեջանի ղեկավարությունը շարունակաբար հայտարարում է, որ Հայաստանի ներկա տարածքների մի մասը ադրբեջանական պատմական հող է: Նման պնդումները ոչ միայն հիմնավորված չեն պատմական կամ իրավական փաստերով, այլև ծառայում են որպես գործիք՝ միջազգային հանրության շրջանում պահանջների «օրինականությունը» ամրապնդելու համար:

Երկրորդ ուղղությունը կապված է, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» պահանջի հետ, որը Ադրբեջանը ներկայացնում է որպես տնտեսական և տրանսպորտային նախագիծ՝ Հայաստանի տարածքով Նախիջևանի հետ կապ հաստատելու համար: Այս պահանջն ուղեկցվում է սպառնալիքներով, թե միջանցքը կստեղծվի՝ անկախ Հայաստանի կամքից:
Երրորդ ուղղությունը տարածաշրջանային նախագծերից Հայաստանի մեկուսացման փորձերն են: Ադրբեջանը նպատակ ունի խոչընդոտել Հայաստանի մասնակցությունը կարևոր տնտեսական և տրանսպորտային նախաձեռնություններում՝ փորձելով զրկել Հայաստանին միջազգային համագործակցության հնարավորություններից: Այս քաղաքականությունն ուղղված է Հայաստանի տնտեսական զարգացման սահմանափակմանը և երկրի վրա ճնշում գործադրելուն:

Դեռևս 2020 թ. դեկտեմբերի 1-ին՝ 44-օրյա պատերազմի ավարտից 21 օր անց, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևն ուղերձով դիմել է Ադրբեջանի ժողովրդին և, առանց օգտագործելու «Զանգեզուրի միջանցք» եզրը, հայտարարել է. *«Իններորդ կետում (խոսքը Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի միջև 2020 թ. նոյեմբերի 9-ին ստորագրված հայտարարության իններորդ կետի մասին է – Խմբ.) ասվում է, որ տարածաշրջանում վերականգնվում են բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերը: Երկու ուղղություններով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների անարգել տեղաշարժը կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև տրանսպորտային հաղորդակցության անվտանգությունը: Տրանսպորտային հաղորդակցությունների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ ծառայությունը և կողմերի համաձայնությամբ կապահովվի Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը Ադրբեջանի արևմտյան շրջանների հետ կապող նոր տրանսպորտային հաղորդակցությունների կառուցումը: Այս 9-րդ կետը հայտարարության մեջ ներառվել է բացառապես իմ պնդմամբ:»*[77]:

«Զանգեզուրի միջանցք» եզրն առաջին անգամ օգտագործել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը, 44-օրյա պատերազմի ավարտից ավելի քան հինգ ամիս անց: 2021 թ. ապրիլի 20-ին ադրբեջանական հեռուստատեսությանը տված հարցազրույցի ժամանակ Իլհամ Ալիևը,

77. Президент Азербайджана Ильхам Алиев обратился к народу, 1.12.2020, https://azertag.az/ru/xeber/prezident_azerbaidzhana_ilham_aliev_obratilsya_k_narodu_video-1654975.

մասնավորաբար, հայտարարել է. *«Զանգեզուրի միջանցքի ստեղծումը լիովին համապատասխանում է մեր ազգային, պատմական և ապագա շահերին: Մենք իրականացնելու ենք Զանգեզուրի միջանցքը, ցանկանում է դա Հայաստանը, թե՝ ոչ: Եթե ցանկանա, ապա ավելի հեշտ կլուծենք, եթե չցանկանա՝ կլուծենք ուժով: Այնպես, ինչպես պատերազմից առաջ և ընթացքում ես ասել էի, որ նրանք պետք է կամովին լքեն մեր հողերը, հակառակ դեպքում մենք նրանց ուժով կվտարենք: Եվ այդպես էլ եղավ: Նույնը կլինի և Զանգեզուրի միջանցքի ճակատագիրը:»*[78]:

Այդ օրվանից հետո՝ մինչ օրս, Ադրբեջանի նախագահը, ադրբեջանական բարձրաստիճան պաշտոնատար անձինք, հասարակական-քաղաքական, լրատվական դաշտի ներկայացուցիչները ամենատարբեր առիթներով պարբերաբար հիշատակում են «Զանգեզուրի միջանցք»-ի մասին, որի համառոտ բովանդակությունը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի տարածքով Ադրբեջանի տարածքի հիմնական մասի և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև երկաթուղային ու ավտոմոբիլային կապի հաստատումն է:

Սակայն իրականում այս պահանջն ունի տարածքային վերահսկողության հաստատման և Հայաստանի ինքնիշխանությունը թուլացնելու հստակ նպատակ: Ադրբեջանը ներկայացնում է Զանգեզուրի միջանցքի նախագիծը որպես տնտեսական և տրանսպորտային կարևոր նախաձեռնություն, սակայն իրականում այն ծառայում է ավելի լայն նպատակների՝ տարածաշրջանում գերիշխանության ամրապնդման և Հայաստանի դիրքերի թուլացման:

Ադրբեջանի ղեկավարությունը բազմիցս նշել է, որ առանց այս միջանցքի՝ Հայաստանի հետ սահմանները չեն բացվի: Սա ոչ միայն տնտեսական շանտաժի դրսևորում է, այլև սպառնալիք Հայաստանի տարածքային ամբողջականության դեմ: Միջանցքի պահանջն ուղեկցվում է հռետորաբանությամբ, թե Զանգեզուրը իբր «պատմական ադրբեջանական հող» է, ինչը բացահայտ հակասում է պատմական և իրավական փաստերին:

Ադրբեջանի ղեկավարությունն իր հռետորաբանությամբ մշտապես սպառնում է Հայաստանի անվտանգությանը: Ալիևի հայտարարությունները, որ «Զանգեզուրի միջանցքը բացվելու է՝ անկախ Հայաստանի կամքից», ուղեկցվում են Հայաստանի վրա ագրեսիայի իրական սպառնալիքով: Ադրբեջանի քաղաքական գործիչներն ու փորձագետները պարբերաբար նշում են, որ եթե Հայաստանը չհամաձայնի միջանցքի ստեղծմանը, ապա Ադրբեջանը պատրաստ է ռազմական միջոցներով հասնել իր նպատակին:

78. Интервью Президента Ильхама Алиева Азербайджанскому телевидению, 20.04.2021, https://azertag.az/ru/xeber/intervyu_prezidenta_ilhama_alieva_azerbaidzhanskomu_televideniyu_obnovleno_video-1760555.

1. Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հարցազրույցը տեղական լրատվամիջոցներին[79]:

Հայաստանի հետ սահմանները չեն բացվի, եթե չբացվի Զանգեզուրի միջանցքը, որը կկապի Ադրբեջանի արևմտյան նահանգները Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ: Ամենահարմար տարբերակն այն երթուղին է, որը կանցնի Մեղրիի շրջանով: Եթե իմ նշած երթուղին չբացվի, մենք չենք բացի Հայաստանի հետ սահմանը:

2. Իլհամ Ալիևը ելույթ է ունեցել «Ղարաբաղ. 30 տարի անց վերադարձ տուն. ձեռքբերումներ և մարտահրավերներ» ֆորումում:

Հայաստանը փակուղում է: Կարծում եմ, որ հիմա հայերի համար երկու տարբերակ կա. կամ սեփական միջոցներով են կառուցում (միջանցքի համար անհրաժեշտ - խմբ.) 42 կիլոմետրանոց երկաթգիծը, որը համարվում է իրենց ինքնիշխան տարածքը, կամ ինչ-որ եվրոպական հիմնադրամների գումարներով:

3. Միլլի Մեջլիսի պատգամավոր Սիյավուշ Նովրուզով[80]:

Կարծում եմ, որ Զանգեզուրի միջանցքը կբացվի այս տարի: Աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները հանգեցնում են դրան: Հայաստանն աշխարհ մուտք ունի միայն Իրանի և Վրաստանի տարածքով: Այս տեսակետից կարծում եմ, որ Հայաստանը կփորձի կարճ ժամանակում լուծել այս հարցը:

4. Միլլի Մեջլիսի պատգամավոր Ֆազաիլ Աղամալի[81]:

Կարծես թե չի հաջողվի կանխել Զանգեզուրի միջանցքի բացումը: Անպայման և անպայման կբացվի: Միգուցե որոշ ժամանակ կպահանջվի: Այսինքն՝ անհնար է, որ Իրանն ու Հայաստանը խոչընդոտեն Զանգեզուրի միջանցքի բացմանը:

79. https://www.trt.net.tr/azerbaycan/turk-dunyasi/2024/01/11/ilham-liyev-z-ng-zur-d-hlizi-il-bagli-b-yanat-verdi-2087220

80. Ադրբեջանում հայտնի քաղաքական գործիչ է, հանդես է գալիս որպես Ալիևի խոսափող. հարցազրույցները սովորաբար հաջորդում են Ալիևի կողմից դաշտ նետված թեզերին: Ադրբեջանի Մարդու իրավունքների հանձնակատարի ամուսինն է, 2-րդ գումարումից սկսած՝ պատգամավոր է Միլլի մեջլիսում՝ որպես իշխող Նոր Ադրբեջան կուսակցության անդամ: Մի քանի անգամ պարգևատրվել է Ալիևի կողմից:

81. Պատգամավոր է Ադրբեջանի Միլլի Մեջլիսի առաջին գումարումից՝ մինչ օրս: Մայր Հայրենիք կուսակցության ներկայացուցիչն է Միլլի մեջլիսում, սակայն 2024 թ. հայտնել է իր անվերապահ աջակցությունը Իլհամ Ալիևին՝ Ադրբեջանի նախագահական արտահերթ ընտրություններում:

5. Yeniazerbaycan.com-ի[82] լրագրող Ս. Իսմայիլզադե:

> *Հայաստանը պարտավոր է գործարկել Զանգեզուրի միջանցքը և երաշխավորել այն, ինչի իրագործումն այսօր լրջորեն խոչընդոտվում է: Որքան էլ Հայաստանը հերքում է, մեծ է հավանականությունը, որ նախագիծը կիրականանա:*

6. Baku TV-ի ռազմական լրագրող Ֆարդին Իսազադե:

> *Հայեր, դուք չունեք վինվորական անձնակազմ, համապատասխան սարքավորումներ, վենք-վինամթերք սահմանային վերահսկողության համար, դուք չեք տնօրինում ձեր ծննդավայրերին: Զանգեզուրի միջանցքը պետք է Արևմուտքին և Ռուսաստանին, ուրեմն այն լինելու է: Թե ինչ գնով կլինի այն, կվճարի Հայաստանը:[84]*

2.4 ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ «ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՆԵՐ» ԵՎ «ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐ» ՈՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Ադրբեջանում հայերը և ղեկավար պաշտոնատար անձինք հաճախ ներկայացվում են որպես «անջատողականներ»[85], ինչը պատահական մոտեցում չէ, այլ պետական մակարդակով մշակված և տարածվող ռազմավարական քարոզչության մաս: Այս հռետորաբանությունը կիրառվում է հակամարտության բորբոքման, հայերի նկատմամբ ատելության խորացման և Ադրբեջանում նրանց գոյության պատմական ժխտման նպատակով:

Նման ձևակերպումները չեն սահմանափակվում միայն պետական պաշտոնյաների կամ քաղաքական գործիչների ելույթներով: Դրանք ընդգրկում են նաև հասարակական գործիչների, լրատվամիջոցների և վերլուծաբանների ելույթները՝ նպաստելով այն ընկալման տարածմանը, որ հայերը օտար, անջատողական և ավերիչ ուժ են, որոնք սպառնում են Ադրբեջանի անվտանգությանը և տարածքային ամբողջականությանը: Ադրբեջանի իշխանությունները, սկսած նախագահից՝ մինչև պատգամավորներ և լրատվական գործիչներ, տարբեր հարթակներում կրկնում են նույն խոսույթը. հայերը «անջատողականներ» են, և սպառնում են Ադրբեջանին:

---

82. Ալիևի գլխավորած Նոր Ադրբեջան կուսակցության պաշտոնական թերթն է:
83. https://www.yeniazerbaycan.com/Arxiv_e95605_az.html
84. https://www.youtube.com/watch?v=9xx1hw6STTI&list=PL-_AEeK7IX4g5nTgDtrswx6sdTIKc_bV5&index=3&ab_channel=BakuTV%7CRU
85. Ադրբեջանում անջատողականներ են անվանում տարբեր ժամանակներում ԼՂ բնակչությանը, շատ հաճախ՝ ղեկավարությանը, մասնավորապես դա կարող է վերաբերել այն անձանց կամ խմբերին, ովքեր հանդես են գալիս Ադրբեջանից Լեռնային Ղարաբաղի անջատման կամ անկախության օգտին: Տարածաշրջանը տասնամյակներ շարունակ եղել է Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունների աղբյուր, երբ Լեռնային Ղարաբաղի էթնիկ հայերը ձգտում էին անկախության, մինչդեռ Ադրբեջանը հաստատել է իր ինքնիշխանությունը այդ տարածքի վրա: Արդյունքում, նրանք, ովքեր պաշտպանում են Լեռնային Ղարաբաղի անկախությունը կամ Ադրբեջանից անջատումը, հաճախ անվանվում են անջատողականներ: Բնորոշումը, սակայն, չի տարածվում տեղի բնակչության կամ ՀՀ-ում բնակվող հայերի վրա:

Այս պատկերացումը ձևավորվել է տարիների ընթացքում՝ պետական քաղաքականության, կրթական համակարգի, մեդիա քարոզչության և հանրային հռետորաբանության միջոցով, որոնք հետապնդում են մի քանի նպատակ: Առաջինը, թերևս, Ադրբեջանի ներքին հանրության համախմբումն է՝ արտաքին թշնամու կերպարի ստեղծման միջոցով. հայերը՝ որպես «սպառնալիք»: Մյուս կողմից, այս խոսույթն արդարացնում է Ղարաբաղում կատարված ապօրինություններն ու հայերի էթնիկ զտումը:

Ադրբեջանի նախագահի և այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարություններն ընդգծում են այն երկարաժամկետ քաղաքականությունը, որի միջոցով Արցախն ու արցախահայությունը մշտապես դիտարկվել են որպես «անջատողականներ»: Արցախի հայերին ներկայացնելով որպես անջատողականներ՝ Ադրբեջանը նպատակ ունի մերժելու նրանց ինքնորոշման իրավունքի լեգիտիմությունը: Անջատողական պիտակը ծառայում է նաև Ադրբեջանի միջազգային քաղաքականությանը, որպեսզի Արցախի հարցը ներկայացվի ոչ թե որպես ազգերի ինքնորոշման պայքար, այլ որպես պետության միասնականության խախտման փորձ: Արցախի հայերի պարբերական պիտակավորումը՝ որպես անջատողականներ, նպատակ ունի լիովին վերացնել նրանց գոյության լեգիտիմությունը թե՛ Ադրբեջանի ներսում, թե՛ միջազգային հանրության աչքում:

Մյուս մանիպուլյատիվ նարատիվն այն է, որ Հայաստանը ներկայացվում է ոչ թե ինքնիշխան պետություն, այլ անջատողական շարժումների հովանավոր: Ադրբեջանական հռետորաբանությունում «անջատողականություն» եզրը ռազմավարական գործիք է, որն օգտագործվում է հայերին և Հայաստանի Հանրապետությանը ներկայացնելու որպես սպառնալիք Ադրբեջանի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության համար:

Ներքևում ներկայացված օրինակներից մեկում, Ալիևի խոսքով, Ադրբեջանի կողմից վերահսկողության հաստատումը Լաչինի միջանցքի և Արցախի նկատմամբ ներկայացվում է որպես «տարածքային ամբողջականության վերականգնում»: Այս հռետորաբանությունը նպատակ ունի լեգիտիմացնել ռազմական գործողությունները և բռնի հայաթափումը՝ դրանք ներկայացնելով որպես պետական ինքնիշխանության վերականգնման անխուսափելի քայլեր: «Անջատողականության գրքի փակման» վերաբերյալ Ալիևի հայտարարությունը բացահայտ նշում է, որ Արցախից հայերի լիակատար բռնի տեղահանումը դիտարկվել է որպես անհրաժեշտ քայլ՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը վերականգնելու համար:

Ներքևում ներկայացված են Ադրբեջանական մեդիայից դուրս բերված հայտարարությունները՝ արված Ադրբեջանի նախագահի, պատգամավորների, լրատվական կազմակերպությունների և քաղաքագետների կողմից:

1. Իլհամ Ալիևը Արցախի բռնի հայաթափումից հետո Ստեփանակերտում ռազմական շքերթ է կազմակերպել և ելույթ ունեցել[86]:

Այս տարվա (2023 - խմբ.) ապրիլի 23-ին մենք լիովին վերականգնեցինք մեր տարածքային ամբողջականությունը՝ վերահսկելով Ադրբեջան-Հայաստան սահմանը Լաչինի ուղղությամբ, իսկ սեպտեմբերի 20-ին՝ ամբողջությամբ վերականգնեցինք պետական ինքնիշխանությունը: Սրանով փակվեց անջատողականների գիրքը: Ադրբեջանում արդեն անջատողականության համար տեղ չի լինի:

2. Իլհամ Ալիևը հանդես է եկել Ամանորյա ուղերձով:

Կամ անջատողական ռեժիմը պետք է ապատ արձակվի, հայկական բանակը պետք է դուրս բերվի մեր տարածքից, կամ մենք ուժով կվերականգնենք մեր պետական ինքնիշխանությունը: Ցավոք սրտի, մեր խոսքերին ուշադրություն չդարձրին: Սեպտեմբերի 19-ին մեկնարկած և ընդամենը մեկ օր տևած հակաահաբեկչական գործողությունն ավարտվել է ադրբեջանական բանակի լիակատար հաղթանակով: Անջատողական ռեժիմը փլուզվել է, ծնկի է իջել մեր առջև, բարձրացրել սպիտակ դրոշը, հանձնվել, ընդմիշտ հեռացվել մեր հողերից և նետվել պատմության աղբանոցը: Սրանով Ադրբեջանում արմատախիլ արվեց անջատողականությունը, իսկ անջատողականությունը՝ այս արհավիրքը, չի կարող նորից ծագել մեր երկրում:

Հարկ է նկատել, որ այս խոսքերն ասվել են ամանորյա ուղերձի ժամանակ, և այն հասանելի էր ոչ միայն ներքին լսարանին, այլև միջազգային հանրությանը:

Ալիևը սեպտեմբերի 19-ի գործողությունները ներկայացնում է որպես «հակաահաբեկչական գործողություն», որը ավարտվել է «ադրբեջանական բանակի լիակատար հաղթանակով»: Սա արդարացնում է ուժի կիրառումը՝ ներկայացնելով այն որպես պետության ինքնիշխանության վերականգնում և ահաբեկչության դեմ պայքար:

Ալիևի հայտարարությունները ոչ միայն արդարացնում են ռազմական գործողությունները, այլ նաև նպատակ ունեն նսեմացնել Արցախի հայերին՝ ներկայացնելով նրանց որպես անջատողական ուժեր, որոնց տեղը «պատմության աղբանոցում» է:

86. Իլհամ Ալիևի այս հայտարարությունը հնչեցվել է Արցախի բռնի հայաթափումից հետո Ստեփանակերտում կազմակերպված ռազմական շքերթի ժամանակ: Այս հանգամանքը կարևոր է, քանի որ այն ընդգծում է Ադրբեջանի ղեկավարության կողմից ցուցադրական ուժի քաղաքականությունը, որը նպատակ ունիազդարարելու այդ տարածաշրջանում հայկական ներկայության «ավարտը»: Շքերթը կազմակերպվել է մի տարածքում, որը նախկինում եղել է հայկական մշակութային և քաղաքական կյանքի կենտրոնը՝ Ստեփանակերտում: Այն իրականացվել է Արցախի հայ բնակչության զանգվածային տեղահանությունից հետո, ինչը փաստացի նշանակում է, որ միջոցառումն ուղղված էր ոչ միայն ադրբեջանական հանրությանը, այլև միջազգային հանրությանը՝ որպես հաղթանակի և լիակատար վերահսկողության խորհրդանիշ:

3. Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը կնոջ՝ Մեհրիբան Ալիևայի հետ Ադրբեջանի Սալյան շրջան այցի ժամանակ հարցազրույց է տվել Ադրբեջանական հանրային հեռուստատեսությանը:

Անջատողականները, որոնք ներկայումս իրենց համար անուններ են հորինում. մեկը իրեն նախագահ է կոչում, մեկը՝ նախարար, մեկ՝ խորհրդարանի խոսնակ, ծաղրածուների այս խումբը վերջապես պետք է իմանա, որ չեն կարող խաղալ մեր համբերության հետ...:

4. Իլհամ Ալիև.

Ստեփանակերտում» իմ նետած քվեաթերթիկը հայ անջատողականների դագաղի վերջին մեխն էր: 30 տարի այնտեղ սատանաներ էին հաստատվել:[87]

Ալիևի կիրառած սատանաներ բնորոշումը պատահական չէ: Դեռևս 2011 թ. Բաքվում լույս է տեսել «Հալե» անունը կրող պատմվածքների ժողովածու, որն իրենից ներկայացնում է արտադասարանական ընթերցանության ուսումնական ձեռնարկ՝ նախատեսված միջին դպրոցում սովորողների համար:

Գրքի նախաբանում, մասնավորաբար, գրված է. *«Հայերը դարձրել են մեկ քաղաքականության էթնիկական կտումների անմեղ կոհ: Մենք դարձել ենք ցեղասպանության կոհ: Այս անկուսպ ժողովուրդը, որի երակներով հոսում է սատանայի արյուն, մեր դեմ կատարել է անթիվ ահաբեկչական գործողություններ:»*[88]:

5. Իլհամ Ալիև.

...Սրանով փակվեց անջատողականների գիրքը: Ադրբեջանում արդեն անջատողականության համար տեղ չի լինի:

6. Իլհամ Ալիև.

Ադրբեջանը պատշաճ կերպով պատժել է թշնամուն՝ անհապաղ ձեռնարկելով անհրաժեշտ քայլեր: Ահաբեկիչները պատժվեցին և ևս մեկ անգամ Հայաստանին ցույց տրվեց, որ նրանց ցանկացած սադրանքի պատշաճ պատասխան է տրվելու... Ես ասացի, որ Հայաստանի բանակի՝ մեր տարածքում ապօրինի կերպով տեղակայված միավորումները պետք է վենքը գետնին դնեն,

87. Իլհամ Ալիևի խոսքում Ստեփանակերտը ոչ միայն ընկալվում է որպես տարածք, այլև որպես քաղաքական խորհրդանիշ, որը «ազատագրվել է»: Նրա կողմից քվեաթերթիկի նետումը ներկայացվում է որպես մի գործողություն, որը մարմնավորում է ամբողջական «հաղթանակը», ինչը փաստացի անտեսում է հայ համայնքի գոյության իրավունքն այս տարածքում:

88. Эрогул А., “Хале” сборник рассказов. Учебное пособие для внеклассного чтения учащихся средних школ, Баку, 2011, с. 3, http://azerichild.info/HALE.pdf.

պետք է վինաթափվեն, ամբողջությամբ դուրս բերվեն մեր տարածքից, և միաժամանակ հանձնեն ողջ վենքերն ու տեխնիկաները: Միայն այդ դեպքում կարող է Ադրբեջանը դադարեցնել հակաահաբեկչական միջոցառումները: Հակառակ դեպքում գնալու ենք մինչև վերջ, թշնամին լավ գիտի մեր ուժն էլ, վճռականությունն էլ...

Եթե ժամանակին ասում էին «Ղարաբաղը Հայաստան է և վերջ», հիմա ասում են՝«Ղարաբաղն Ադրբեջան է» ու ոչ միայն ասում, այլև չեն մոռանում նշել մեր տարածքի չափերը:

Չնայած բոլոր անարդարություններին, հանցավոր Հայաստանի վարչակարգի կողմից իրագործված բոլոր հանցանքներին՝ մենք հայ ժողովրդին այդ հանցանքներում երբեք չենք մեղադրել: Մենք հայ ժողովրդին չենք մեղադրել Խոջալուի ցեղասպանության, մեր քաղաքների, գյուղերի, գերեզմանների ավերման համար: Մենք մեղադրել ենք հանցավոր վարչակարգի տարրերին, ղեկավարներին և մենք նրանց պատասխանատվության ենք ենթարկում և ենթարկելու: Որոշներն արդեն իրենց արժանի պատիժը կրել են, որոշներն էլ կրելու են:.... Հանցավոր խունտայի ռեժիմի հանձնվելուց հետո լարվածության այս օջախը, թույնի այս որջը կմնա պատմության գրկում, և Ղարաբաղում ապրող հայ բնակչությունը վերջապես կարող է հանգիստ շունչ քաշել:

Ես սա ասել եմ և ուզում եմ մեկ անգամ ևս ասել՝ Ղարաբաղի հայ բնակչությունը մեր քաղաքացիներն են: Պարզապես հայ ազգայնականները, պատերազմական հանցագործները, Հայաստանի ու Ղարաբաղի չակերտավոր ղեկավարները պատանդ էին վերցրել այդ մարդկանց ու թունավորել էին նրանց ուղեղները: Անվերջ ստեր հորինեցին Ադրբեջանի ու Ադրբեջանի ժողովրդի մասին ու լցրեցին նրանց ուղեղները, թունավորեցին նրանց ուղեղները: Ես վստահ եմ, որ Ղարաբաղում ապրող հայ բնակչությունը շուտով կտեսնի փոփոխություն դեպի լավը, քանի որ մեր նպատակն է կառուցել համատեղ կյանք՝ հիմնված խաղաղության, փոխըմբռնման և փոխադարձ հարգանքի վրա: Մենք հայ ժողովրդի հետ որևէ խնդիր չունենք, թշնամանք/չարություն էլ չունենք:

..... Սակայն, այս ամենի հետ մեկտեղ պետք է նշեմ, որ մեզ արհամարհողները, մեր հողի վրա աչք ունեցողները, մեր հաջողությունները չմարսողները թող երբեք, երբեք չմոռանան, որ երկաթե բռունցքն իր տեղում է և միշտ տեղում է լինելու: Ոչ ոք մեզ հետ թելադրողի և վերջնագրի լեզվով խոսել չի կարող: Եվ նաև չմոռանան, որ Ղարաբաղն Ադրբեջան է:

7. Իլհամ Ալիևի հարցազրույցը տեղական ոչ ընդդիմադիր հեռուստատեսություններին:

Մեր երկրում անջատողականության բույն չպետք է լինի, և եթե մեր սերնդին բախտ չի վիճակվում դա անել, պետք է այնպիսի երիտասարդ սերունդ դաստիարակենք, որ գան ու անեն 20 տարի, 30 տարի, 50 տարի հետո: Սակայն մեր դիրքորոշումն անջատողականների առաջնորդների նկատմամբ միանշանակ էր՝ նրանց գերեվարումը: Երբ նրանցից ոմանք փորձեցին այնտեղից փախչել Լաչինի ճանապարհով, նրանցից մի քանիսին հայտնաբերեցին Խանքենդիում, մի քանիսին էլ այլ վայրերում գերեվարեցին:

8. Իլհամ Ալիևը ելույթ է ունեցել Բաքվի 11-րդ գլոբալ ֆորումի բացման արարողությանը՝ «Կոտրված աշխարհի վերականգնում» թեմայով:

Մենք հակահաբեկչական գործողություն իրականացրեցինք անցած տարվա սեպտեմբերին, 24 ժամից էլ քիչ ժամանակում: Մեկընդմիշտ վերջ դրեցինք Ադրբեջանում անջատողականությանը և վերականգնեցինք մեր ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը:

2019 թվականին Հայաստանի նոր ղեկավարությունը հանդես եկավ միանգամայն անընդունելի առաջարկներով, ինչպիսիք են. Ադրբեջանը պետք է բանակցի անջատողականների հետ, բոլոր հարցերը, որոնք հիմք են հանդիսացել խաղաղության համաձայնագրի հիմքում, պետք է վրոյացվեն, և ամեն ինչ պետք է նորից սկսվի, Հայաստանը ոչ մի սանտիմետր չի վերադարձնելու օկուպացված տարածքներից: Բացի այդ, հնչել է Հայաստանի վարչապետի՝ «Ղարաբաղը Հայաստան է» հայտնի կարգախոսը: Նախ, դա լիովին հակասում էր միջազգային իրավունքին, և երկրորդ՝ չափազանց հավակնոտ քայլ էր մի երկրի համար, որը կարծում էր, որ հավերժ կպահի մեր հողը:

Ուզում եմ որոշ մանրամասներ պատմել այն մասին, թե ինչ է տեղի ունեցել սեպտեմբերի սկզբին և ինչու է հակահաբեկչական գործողությունը իրականացվել սեպտեմբերին: Որովհետև սեպտեմբերի սկզբին Հայաստանի վարչապետը շնորհավորական նամակ է հղել անջատողական վարչակարգին՝ Անկախության օրվա կապակցությամբ: Սա չէինք սպասում, և դա մեզ համար բացասական անակնկալ էր: Որովհետև Հայաստանի այդ վարչապետը 2022 թվականին Պրահայում կայացած հանդիպմանը հրապարակավ ճանաչեց Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և մի քանի անգամ շեշտեց, որ Հայաստանը տարածքային պահանջներ չունի Ադրբեջանի դեմ: Լավ, ուրեմն ինչ կարիք կար այս շնորհավորանքի: Այս ողջույնն ուղղված էր անջատողականներին, և դա Ադրբեջանի ինքնիշխանության խախտում էր, միանգամայն հակասական և անընդունելի արարք:

9. Բեհրուզ Մեհերրեմով, Միլլի Մեջլիսի պատգամավոր:

Ադրբեջանը ծնկի բերեց անջատողականությունն ու Հայաստանը այն ժամանակ, երբ նրանք ամենաուժեղ ու ամենաշատ աջակցությունն ունեին: Այս պահին, երբ ադրբեջանական բանակը վերահսկում է օպերատիվ իրավիճակը ողջ տարածաշրջանում, Ադրբեջանի և Հայաստանի միջև անջրպետը օրեցօր խորանում է, ագրեսիվ գործողությունների մասին երակները դատարկ էյֆորիա են:

10. Միլլի Մեջլիսի պատգամավոր, պաշտպանության, անվտանգության և հակակոռուպցիոն հանձնաժողովի անդամ Էլշադ Միրբեշիրօղլու[89]:

2020 թվականից հետո մենք կրկին կոչ արեցինք Հայաստանին և Ադրբեջանի տարածքներում գտնվող անջատողականներին՝ իրենց վինված ուժերը դուրս բերել մեր հողերից: Ո՛չ Հայաստանը, ոչ անջատականները պատշաճ կերպով չարձագանքեցին Ադրբեջանի այս կոչերին: Ի վերջո, 2023 թվականին իրականացվեցին հակաահաբեկչական միջոցառումներ, և մենք վերջ դրեցինք անջատողականությանը:[90]

11. Ադրբեջանի Միլլի Մեջլիսի պատգամավոր Ազեր Բադամով[91]:

Սեպտեմբերի 9-ին Խանքենդիում, այսպես կոչված, կառույցի համար կեղծ ընտրություններ են կազմակերպվել, և անջատողականների նոր առաջնորդ է ընտրվել: Սակայն առաջատար միջազգային կազմակերպություններն ու երկրները դատապարտեցին այսպես կոչված ընտրությունները և ևս մեկ անգամ հայտարարեցին, որ ճանաչում են Ղարաբաղը որպես Ադրբեջանի ինքնիշխան տարածք:[92]

12. Քաղաքագետ Էլխան Շահինօղլու:

Անջատողականների պես մտածողները մեր տարածքում չպետք է տեղ ունենան: Սա նաև մեր հողերում կրկին հայկական անջատողականության գլուխ չբարձրացնելու տեսանկյունից է կարևոր: Ղարաբաղում ադրբեջանցիների թիվը պետք է տասը, քսան անգամ ավելի շատ լինի, քան հայերինը: Եթե Ղարաբաղում մնա Ադրբեջանի օրենքներով ապրել ցանկացող հայ, ապա նրա շուրջը պետք է լինեն ադրբեջանցիներ:

13. Jamaz info (Լրագրողների հետաքննական կենտրոն):

Անջատողականները դեռ չեն հավատում, որ Ղարաբաղի հարցն ավարտված է: Որովհետև Ադրբեջանը վերականգնել է իր ինքնիշխան տարածքը և կրկին թույլ չի տա անջատողականություն իր արգանդում: Նրանց շարժումը ոչ այլ ինչ է, քան՝ խաղ:[93]

89. Ադրբեջանի իշխող Նոր Ադրբեջան կուսակցության պատգամավոր է Միլլի Մեջլիսում: 2019 թ. պարգևատրվել է Ալիևի կողմից:
90. https://modern.az/olke/460120/ermenistan-yeni-muharibe-istemirse-kendleri-azad-etmelidir/
91. Իշխող կուսակցության անդամ է, իշխող ուժի ներկայացուցիչ խորհրդարանում, 4-րդ, 5-րդ և 6-րդ գումարումների պատգամավոր:
92. https://pravda.az/news/126005?fbclid=IwZXh0bgNhZW0CMTAAAR3X2o5LcBDQLAbwruKLwZcmAG5rTkD7XcINkMdDi22QuU9kDdrIPjENhll_aem_AR-FZrpLsEiA9PLUi3rmn3IRFwBUEuyCxNQKloWPPg5KxcgBcKr5Yjio5PYZaNpA1nzXtOGfc7Il4ekR0yO2z_tv
93. https://jamaz.info/x%c9%99b%c9%99rl%c9%99r/manset/separatcilarin-parlamenti-iclas-kecirm%c9%99y%c9%99-hazirlasir-harutyunyan-sahramanyani-danlayib/

14. Baku TV թղթակից Գունայ Նամազովա[94]:

Արդեն մի քանի օր է, ինչ Ղարաբաղում անջատողականները աղմկում ու բողոքում են, որ Խանքենդին դուրս գա «շրջափակումից»:

15. Հետաքննող լրագրող Սամիր Ֆեյրուզով:

Առաջին հերթին պետք է փորձել հասնել նրան, որ Ղարաբաղում ապրող հայ երիտասարդները գաղթեն: Եթե հայերի ավագ սերունդները մնան Ղարաբաղում, դա շատ լուրջ գործոն կլինի մեր հեռանկարային պատմության համար: Հայերի ավագ սերունդը թոշակ կստանա և կմահանա 5, 10, 15 տարի հետո: Երիտասարդների բացակայությունից հետո Ղարաբաղը, հատկապես Խանքենդին, ամբողջությամբ կմաքրվի հայերից: Բնական գործընթաց պետք է լինի: Մենք ոչ մեկին չենք մաքրում Ղարաբաղից բռնի միջոցներով:

Ֆեյրուզովը բացահայտ խրախուսում է Ղարաբաղի հայ երիտասարդների գաղթը. «Բնական գործընթաց պետք է լինի: Մենք ոչ մեկին չենք մաքրում Ղարաբաղից բռնի միջոցներով» արտահայտությունը ցույց է տալիս, որ հայ երիտասարդների հեռանալը երևութապես լինելու է բնական գործընթաց, բայց սա ակնհայտորեն ուղղված է էթնիկ զտման ռազմավարությանը: Չնայած այն վերապահմանը, թե « ...ոչ մեկին չեն մաքրում Ղարաբաղից բռնի միջոցներով», իրականում առաջարկվող գործողությունները (գաղթի խրախուսում և ժողովրդագրական ճնշում) ինքնին կարող են դիտվել որպես միջնորդավորված բռնի միջոցներ: Ֆեյրուզովը դիտարկում է ավագ սերնդի մնալու հավանականությունը որպես «ժամանակավոր» խնդիր՝ նրանց տարիքի և բնական մահով մահանալով պայմանավորված: Ամբողջ ելույթը նպատակ է հետապնդում երկարաժամկետ հեռանկարում Ղարաբաղն ամբողջությամբ «մաքրել» հայերից:

16. A-R.AZ (AZERBAIJAN REALITIES) լրատվական-վերլուծական կենտրոն, Նաիլե Թաղիզադե:

Խանքենդիում օկուպացիայի ժամանակ նախկին խունտայի ռեժիմի կողմից կառուցված բոլոր անջատողական շենքերը չեղարկվում են:

Անջատողական ռեժիմի հիմնասյուն հանդիսացող այս շենքի քանդումը «Ադրբեջանի տարածքում չի կարող երկրորդ հայկական պետություն լինել» ասացվածքի իրական ապացույցն է: Այս շենքի բացումը տեղի է ունեցել 2007 թվականի սեպտեմբերի 2-ին: Նման շենքեր կառուցելով՝ անջատողական ռեժիմը նպատակ ուներ կեղծել Ղարաբաղի պատմությունը:

94. «Baku TV»-ն իշխանամետ ինտերնետային հեռուստաալիք է, որը հիմնադրվել է 2018 թ.:

Ադրբեջանն այսօր վերաշարադրում է Ղարաբաղի պատմությունը, որը հայերը փորձել են ջնջել աշխարհի երեսից: Բացահայտված են անջատողական ռեժիմի բոլոր գործողությունները, որոնք ուղղված են պատմությունը կեղծելուն:

Հոդվածում հիշատակվում է, որ Խանքենդիում (Ստեփանակերտում) կառուցված շենքերը, որոնք, ըստ նրանց, խորհրդանշում են «անջատողականության ռեժիմի հիմնասյուները», ենթակա են ոչնչացման: Նմանատիպ պնդումներն ուղղված են ոչ միայն հայկական ներկայության ժխտմանը, այլև դրա ցանկացած վկայության վերացմանը: Թաղիզադեն պնդում է, որ «անջատողական ռեժիմը» փորձել է «կեղծել Ղարաբաղի պատմությունը»: Այս մոտեցումը նպատակ ունի հայկական ժառանգությունը ներկայացնել որպես կեղծիք՝ դրանով իսկ հիմնավորելով Ադրբեջանի քայլերը:

Ադրբեջանի իշխանությունները պնդում են, թե հայերը «կեղծել են Ղարաբաղի պատմությունը»: Նման հռետորաբանությունը միտված է տարածաշրջանում հայկական բազմադարյա ներկայությունը մերժելուն: Հայտարարության մեջ կրկին բարձրաձայնվում է ադրբեջանական հիմնական գաղափարախոսական թեզը՝ «Ադրբեջանի տարածքում չի կարող լինել երկրորդ հայկական պետություն»: Այս հայտարարությունն օգտագործվում է՝ լեգիտիմացնելու Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի մերժումը:

Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաները, քաղաքական գործիչներն ու փորձագետները վերջին տարիներին հետևողականորեն օգտագործում են նաև «ահաբեկիչ» բնորոշումը Արցախի քաղաքական և ռազմական ղեկավարության, ինչպես նաև՝ հայկական էթնիկ խմբի դեմ: Այս որակումը կիրառվում է որպես գործիք՝ ոչ միայն արդարացնելու ագրեսիան և բռնության քաղաքականությունը, այլև լեգիտիմացնելու հայկական կողմի նկատմամբ կիրառվող ճնշումները՝ ներառյալ տեղահանությունները, ձերբակալությունները և այլ բռնի մեթոդները: Ահաբեկիչների որակումը հայ քաղաքական գործիչների, զինծառայողների և հայ ժողովրդի նկատմամբ ադրբեջանական քաղաքական հռետորաբանության մեջ նպաստում է հայատյացության խորացմանն ու միջազգային հանրության շրջանում հակահայկական տրամադրությունների տարածմանը:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևն իր ելույթներում հաճախակի է ընդգծել, որ իրականացված ռազմական գործողություններն ունեցել են «հակաահաբեկչական» բնույթ: Հայստարարությունները, որտեղ հայ քաղաքական գործիչները ներկայացվում են որպես «ահաբեկիչներ», նպատակ ունի համաշխարհային հանրությանը փոխանցելու այն ուղերձը, թե հայկական կողմի յուրաքանչյուր գործողություն սպառնալիք է ներկայացնում տարածաշրջանային կայունության համար: Իլհամ Ալիևի հայտարարություններում, որոնք հնչել են ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ հանդիպումից հետո, հայերը ներկայացվում են որպես «ահաբեկիչներ», որոնք օգտագործում են Արցախը՝ «Ադրբեջանի դեմ

ահաբեկչական գործողություններ իրականացնելու համար»: Այս հայտարարությունները ոչ միայն աղավաղում են պատերազմի բուն էությունը, այլև դիվանագիտական լեգիտիմություն են հաղորդում ադրբեջանական ագրեսիային:

Հայ զինծառայողները ևս պարբերաբար դառնում են ադրբեջանական քարոզչական մեքենայի թիրախը: Ադրբեջանի ԶԼՄ-ներն ու փորձագետները հաճախակի օգտագործում են «ահաբեկիչներ» բառը՝ նկարագրելով հայ զինծառայողներին, որոնք Արցախի պաշտպանական մարտերում մասնակցել են պատերազմի: Օրինակ, ադրբեջանական պաշտոնական աղբյուրներից մեկում հայ զինվորները նկարագրվում են որպես «ահաբեկիչներ», որոնք «կազմակերպել են սադրիչ գործողություններ Ադրբեջանի բանակի դեմ»: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս լեգիտիմացնել պատերազմական գործողությունները և դրանք ներկայացնել ոչ թե որպես ռազմական ագրեսիա, այլ որպես «հակաահաբեկչական միջոցառում»:

Ադրբեջանի իշխանությունների և փորձագիտական համայնքի կողմից կիրառվող «ահաբեկիչներ» որակումը հաճախ է տարածվում նաև հայ ժողովրդի վրա՝ որպես էթնիկ խումբ: Նմանատիպ խոսույթները նպատակ ունեն խորացնել հայատյացությունը ադրբեջանական հանրության շրջանում: Օրինակ, լրագրող Քենան Ռովշանօղլուն իր հրապարակումներում պնդում է, թե «հայերի սերը տեռորի հանդեպ» դարավոր խնդիր է, ինչը նրանց դարձրել է «համայնքային ազգերի հիմնական զենքը»: Այսպիսի հայտարարությունները նպաստում են այն մտքի ձևավորմանը, որ հայ ժողովուրդը ինքնին ահաբեկչության քարոզիչ է:

1. Իլհամ Ալիևը Արցախի բռնակցումից և հայաթափումից հետո ուղերձով դիմել է ժողովրդին:

> *Ադրբեջանը պատշաճ կերպով պատժել է թշնամուն՝ անհապաղ ձեռնարկելով անհրաժեշտ քայլեր: Տեղային բնույթի հակաահաբեկչական միջոցառումներ սկսվեցին և սահմանված առաջադրանքները կատարվեցին ընդամենը մեկ օրվա ընթացքում: Ահաբեկիչները պատժվեցին, և ևս մեկ անգամ Հայաստանին ցույց տրվեց, որ նրանց ցանկացած սադրանքի պատշաճ պատասխան է տրվելու:*[95]

2. Բաքվում Իլհամ Ալիևի և ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հանդիպմանը հաջորդած մամուլի հաղորդագրություն:

> *Ադրբեջանը վերականգնեց իր տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը 2020 թվականին Ղարաբաղյան Երկրորդ պատերազմի և անցյալ տարվա սեպտեմբերին իրականացված հակաահաբեկչական գործողության արդյունքում:*[96]

95. https://president.az/az/articles/view/61113
96. https://president.az/az/articles/view/65365

3. Միլլի Մեջլիսի պատգամավոր Իլթիզամ Յուսիֆովի հարցազրույցը[97]:

Հայերը պետք է լուրջ հետևություններ անեն: Ղարաբաղում գտնվող ահաբեկիչների և ավազակների խմբավորումը կամ պետք է օգտվի Ադրբեջանի նախագահի՝ մի քանի ամիս առաջ Լաչինում հնչեցրած համաներման հայտարարությունից, կամ, ինչպես հայտարարվեց օրերս Շուշայի գլոբալ մեդիա ֆորումում, ադրբեջանցիների դեմ հանցագործություն կատարած հանցագործները ստիպված կլինեն դատարանի առաջ պատասխան տալ ոչ միայն Բաքվում, այլև Երևանում:

Վագիֆ Խաչատուրյանի ճակատագիրը սպասվում է նաև վարդանյաններին, հարությունյաններին, ներսիսյաններին, բաբայաններին և այլ ահաբեկիչ-ավազակներին: Նրանց՝ ձեռնաշղթաներով արդարադատության դատարանում իրենց կատարած հանցագործությունների համար պատասխան տալու օրվան էլ է քիչ մնացել:[98]

Հայտարարության մեջ հայերը ներկայացվում են որպես «ահաբեկիչներ» և «ավազակներ»: Այս պիտակավորումները թիրախավորում են բոլոր հայերին՝ նրանց նկատմամբ ատելություն և թշնամանք սերմանելով:

Վագիֆ Խաչատուրյանի դեպքին անդրադարձն օգտագործվում է որպես օրինակ՝ վախ ներշնչելու նպատակով՝ ընդգծելով, որ նրանց սպասում է կոշտ պատիժ:

Հայտարարության հիմնական ուղերձներից մեկն այն է, որ հայ համայնքի նկատմամբ ցանկացած գործողություն կամ պատիժ արդարացված է: Սա ձևավորում է պատկեր, թե Ադրբեջանի գործողություններն օրինական են:

«Ադրբեջանցիների դեմ հանցագործություն կատարած հանցագործները» ձևակերպումը նպաստում է բռնության արդարացմանը՝ ներկայացնելով ադրբեջանական կողմի գործողությունները որպես անհրաժեշտ պատասխան հայկական կողմի ենթադրյալ գործողություններին:

97. 2013 թ. պարգևատրվել է Ալիևի կողմից, անկուսակցական, անկախ պատգամավոր է:
98. https://olke.az/siyaset/338088/rubenlerin-araiklerin-de-qollarinin-qandallanmasi-gune-cox-az-qaldi-aiqlama/

2.5 ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՅԼ ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՊԻՏԱԿԱՎՈՐՈՒՄԸ

«Թշնամիներ»[99]

Ադրբեջանի քաղաքական գործիչների, քաղաքագետների և ՁԼՄ-ների խոսույթում հայերին հաճախ դիտարկում են որպես «թշնամի»: Այս բառի կիրառումը կապվում է ոչ միայն ներկա հակամարտության հետ, այլև խոր արմատներ ունի տարածաշրջանային պատմության մեջ, որտեղ թշնամու կերպարը նպատակ ունի արդարացնել հակահայկական քաղաքական և ռազմական գործողությունները:

Ադրբեջանական իշխանությունների կողմից հայերին որպես «թշնամի» պիտակավորելը տարիներ շարունակ կիրառվող ռազմավարություն է, որն ուղղված է երկու կարևոր նպատակի.

- Ապահովել հասարակության համախմբումն արտաքին «վտանգի» շուրջ:
- Հայերի նկատմամբ բացասական վերաբերմունքը դարձնել պետական քաղաքականության հիմնաքար:

«Թշնամիներ» պիտակավորումը կենտրոնական տեղ է զբաղեցնում Ադրբեջանի քարոզչական համակարգում՝ ծառայելով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական շահերին: Ներքին լսարանի համար թշնամու կերպարը կեղծ միասնություն է ապահովում՝ ստեղծելով պատկեր, թե Հայաստանը և հայերը մշտապես սպառնում են ադրբեջանական ինքնիշխանությանը: Արտաքին քաղաքականության մեջ հակահայկական հռետորաբանությունն օգտագործվում է միջազգային հարթակներում՝ Հայաստանի քայլերը ներկայացնելով որպես ագրեսիվ և Ադրբեջանի քայլերը՝ որպես «ինքնապաշտպանություն»:

Ներքևում բերված օրինակներում հայերը ներկայացվում են ոչ միայն որպես ռազմական հակառակորդ, այլև որպես էթնիկ խմբի ընդհանուր թշնամի: Իլհամ Ալիևի ելույթներում և Միլլի Մեջլիսի պատգամավորների հայտարարություններում «թշնամի» եզրը նպատակ ունի կերտել մշտական սպառնալիքի զգացում, որը պարտադրում է ազգային միասնություն: Օրինակ, Ալիևը շեշտում է, որ «թշնամին ծնկի իջավ» կամ «մենք միշտ թույլ չենք տա, որ մեր տարածքում ստեղծվի երկրորդ հայկական պետություն»: Սա օգտագործվում է ներքին լսարանի մոտ ազգային արժանապատվության և ուժի գիտակցումը բարձրացնելու համար:

Միլլի Մեջլիսի պատգամավորների ելույթներում «թշնամու» գաղափարը ներկայացվում է ազգային անվտանգության համատեքստում՝ պնդելով, որ հայերը և նրանց կողմնակիցները

99. Լեռնային Ղարաբաղի հակամարտության և Հայաստանի հետ հարաբերությունների առնչությամբ, Ադրբեջանում «թշնամի» հասկացությունը հաճախ օգտագործվում է՝ Հայաստանին և հայկական ուժերին մատնանշելու համար: Այս հռետորաբանությունը տասնամյակների պատմություն ունի և սկիզբ է առնում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի շուրջ Ադրբեջանի և Հայաստանի միջև երկարատև հակամարտությունից, ինչպես նաև՝ երկու երկրների միջև ավելի լայն պատմական և տարածքային վեճերից: Ադրբեջանում այն ընկալումն է արմատացած, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդյունքում հայկական ուժերն «օկուպացրել են» ադրբեջանական տարածքները:
«Թշնամի» հասկացությունը հաճախ է օգտագործվում՝ Հայաստանին և հայկական ուժերին բնորոշելու համար՝ արտացոլելով երկու ժողովուրդների միջև խորը արմատացած թշնամությունը: Այս և նմանատիպ այլ բնորոշումները խիստ քաղաքականացված են և արտացոլում են Ադրբեջանի կառավարության ու հասարակության տեսակետները:

մշտապես սպառնում են Ադրբեջանի պետականությանը: Օրինակ՝ Թահիր Միրքիշիլին նշում է, որ «թշնամին միշտ մնալու է թշնամի», ինչն արդարացնում է ցանկացած ագրեսիվ գործողություն:

Այս խոսույթի հիմքում ընկած է հայերի ապամարդկայնացումը և նրանց մշտական վտանգ ներկայացնելու միտումը:

1. Իլհամ Ալիևը ելույթ է ունեցել Արցախի բռնի հայաթափումից և օկուպացիայից հետո Ստեփանակերտում կազմակերպած շքերթի ժամանակ:

Մեկ նոր պատերազմ պետք չէ: Մենք հասանք մեր ուզածին, վերականգնեցինք միջազգային իրավունքը, վերականգնեցինք պատմական արդարությունը, վերականգնեցինք մեր ազգային արժանապատվությունը, թշնամուն ցույց տվեցինք իր տեղը: Թշնամին ծնկի իջավ մեր առաջ, և ես այսօր այստեղ ելույթ եմ ունենում հաղթանակած վինված ուժերի առաջ:[100]

2. Արցախի օկուպացիայից առաջ ադրբեջանական զորամասերից մեկում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարել է:

... Ես ասել եմ ...որ թշնամուց մեր վրեժը լուծելու ենք մարտի դաշտում, մեր նահատակների արյունը վերցնելու ենք մարտի դաշտում, և այդպես էլ եղավ: Ադրբեջանական բանակը չի պատերազմել խաղաղ բնակչության դեմ, դա բոլորը գիտեն և տեսնում են:

Ես ասել էի, որ մենք երբեք թույլ չենք տա, որ մեր տարածքում ստեղծվի երկրորդ հայկական պետություն, և այդպես էլ եղավ: Մենք ասել էինք, որ թշնամուն վռնդելու ենք մեր հողերից. թշնամուն վռնդեցինք մեր հողերից, Ադրբեջանի դրոշը բարձրացրինք մեր պատմական հողերում:[101]

3. Իլհամ Ալիևը Արցախի բռնի հայաթափումից հետո Ստեփանակերտում ռազմական շքերթ է կազմակերպել և ելույթ ունեցել:

Այսպիսով, մենք վերականգնեցինք պատմական արդարությունը: 2023 թվականի սեպտեմբերի 20-ը կմնա մեր պատմության մեջ, ինչպես նոյեմբերի 8-ը: Նոյեմբերի 8-ին Շուշայի օպերացիայից հետո թշնամի բանակի մեջքը կոտրվեց և մեկ օր անց ստորագրեց կապիտուլյացիայի ակտը:[102]

100. https://president.az/az/articles/view/62139
101. https://president.az/az/articles/view/60327
102. https://president.az/az/articles/view/62139

4. Միլլի Մեջլիսի պատգամավոր Էլման Նասիրովն[103] անդրադարձել է Բաքվի կենտրոնական փողոցներից մեկի գրախանութում եղած՝ Հայաստանում մարդու իրավունքների վերաբերյալ գրքերին:

Պետք է տեղյակ լինենք, որ Հայաստանը տեղեկատվական պատերազմ է մղելու մեր դեմ տարբեր ուղղություններով: Պետք է իմանանք, որ թշնամին չի քնել, նա առիթ է փնտրում: Թշնամին միշտ թույլ կետ է փնտրում հարվածելու համար:[104]

5. Միլլի Մեջլիսի պատգամավոր Էլման Մամադովն[105] անդրադարձել է Ալիևի՝ Խոջալու այցին:

Ուրախալի է, որ նախագահը Խոջալուում է, աստիճանաբար մյուս տարածքները ևս կմաքրվեն թշնամուց: Մենք նույնպես անհամբեր սպասում ենք հայրենի Խոջալու վերադառնալուն:[106]

6. Միլլի Մեջլիսի պատգամավոր Թահիր Միրքիշիլիի[107] ելույթը խորհրդարանում:

Թշնամին միշտ մնալու է թշնամի: Նրանք հարվածելու են մեր ամենասովորական խոցելի պահին: Մեկանից յուրաքանչյուրը պետք է միասնական դիրքորոշում ցուցաբերի ազգի և պետականության հարցում և չպետք է շեղվի Հեյդար Ալիևի ուղուց, որն ազգային պետականության հիմնարար ուղին է:[108]

7. Միլլի Մեջլիսի՝ Լաչինի շրջանի պատգամավոր, իշխող կուսակցության անդամ Մահիր Աբբասզադե:

Ադրբեջանական բանակը սահմաններին շատ զգոն ու աչալուրջ է: Մեր սահմանները հուսալիորեն պահպանվում են մեր բանակի կողմից, թշնամուն արժանի պատասխան է տրվում և սրանից հետո էլ է տրվելու: Բայց Հայաստանի քայլերը ստիպում են մեզ ամբողջությամբ փակել Լաչինի շրջանով անցնող ճանապարհը: Թշնամին դեռ չի կարողանում ընդունել Ադրբեջանի ամուր դիրքերը մեր սահմաններին:

---

103. Ադրբեջանի Միլի Մեջլիսի 5-րդ և 6-րդ գումարումների պատգամավոր է, Ալիևի գլխավորած կուսակցության միջազգային հարաբերությունների հանձնաժողովի քարտուղար, մի քանի անգամ պարգևատրվել է Իլհամ Ալիևի կողմից:
104. https://demokrat.az/az/news/182946/kimlerdense-istifade-olunur
105. Իշխող կուսակցության պատգամավոր է, որի ելույթներն ու մեկնաբանությունները հաճախ հաջորդում են Ալիևի առաջ քաշած թեզերին:
106. https://modern.az/olke/422839/prezidentin-xocaliya-getdiyini-grende-chox-sevindim/
107. Տնտեսական քաղաքականության, արդյունաբերական և ձեռներեցության կոմիտեի նախագահն է: Ալիևի գլխավորած Նոր Ադրբեջան կուսակցության խորհրդի անդամ է, մի քանի անգամ պարգևատրվել է Ալիևի կողմից:
108. https://report.az/daxili-siyaset/serhed-buraxilis-menteqesinin-qurulmasi-ilham-eliyevin-xarici-ve-herbi-siyasetinin-muhum-ugurudur/

8. Քաղաքական մեկնաբան Էլմիր Սաֆթարով:

Հիմա մեր առջև ոչ միայն թշնամի երկիր Հայաստանն է, այլև նրա հովանավորները: Սա Ադրբեջանին կանգնեցնում է քաղաքական ճնշումների առաջ: Այնուամենայնիվ, մեր պետության կողմից իրականացվող քաղաքականությունը արդյունավետորեն չեզոքացնում է միջամտության բոլոր փորձերը:

9. Baku TV-ի ռեպորտաժն Ադրբեջանական ԶՈՒ-ի կազմավորման 105 ամյակի առթիվ:

44 օր տևած Հայրենական պատերազմի արդյունքում մեր հողերը, որոնք շուրջ 30 տարի օկուպացված էին, ազատվեցին թշնամուց: Ներկայումս Ադրբեջանի դրոշը ծածանվում է Շուշայում, Ֆիզուլիում, Ջաբրայիլում, Ջանգիլանում, Գուբադլիում, Լաչինում, Քալբաջարում, Աղդամում և ամբողջ Ղարաբաղում:

10. AR.AZ լրատվական-վերլուծական կենտրոն, Նաիլե Թաղիզադե:

Թշնամու նկատմամբ մեր փառապանծ բանակի պատմական հաղթանակի արդյունքում կյանքը վերստին սկսվում է ապատությունը վերագտած Ղարաբաղում:

«Վախկոտներ»

Ադրբեջանական պետական պաշտոնյաների, քաղաքական գործիչների և մեդիայի խոսույթում հայերի նկատմամբ «վախկոտներ» պիտակավորումը հաճախ կիրառվում է՝ ներկայացնելու նրանց որպես թուլության և անկարողության խորհրդանիշ: Այս որակումը նպատակ ունի ոչ միայն նսեմացնել հայերին, այլև վարկաբեկել նրանց ինքնությունը՝ էթնիկական, քաղաքական և ռազմական համատեքստերում:

Պատերազմական և հետպատերազմյան իրավիճակներում պիտակավորումը դառնում է կարևոր քարոզչական գործիք՝ հակամարտող կողմերի միջև ազգային արժանապատվության պայքարում: Նման բնորոշումները նպատակ ունեն թուլացնել հայ ժողովրդի համազգային ինքնագնահատականը, իսկ ադրբեջանական լսարանի մոտ ամրապնդել հաղթանակի զգացումը:

Իլհամ Ալիևն իր հայտարարություններում հայերի պարտությունը կապում է նրանց «թուլության» հետ՝ ընդգծելով Ադրբեջանի ուժն ու ճնշումը և հայերին ներկայացնում է որպես «վախկոտների», որոնք «բարձրացրել են սպիտակ դրոշ»:

Ադրբեջանական պետական և մասնավոր մեդիան պարբերաբար վերարտադրում է հայերի «վախկոտության» մասին հռետորաբանությունը: Հոդվածներից մեկում հայերը բնորոշվում են

որպես «մի բուռ վախկոտներ», որոնք «թաքնված են ուրիշների թիկունքում»: Նման բնորոշումները հանրային լսարանի մոտ ձևավորում են կարծրատիպեր հայերի մասին՝ որպես «դավաճան» և «անարդար» ազգ:

1. Իլհամ Ալիևը Ադրբեջանում նախագահական արտահերթ ընտրություններից հետո Միլլի Մեջլիսում երդմնակալության արարողության ժամանակ հանդես է եկել ժողովրդին ուղղված ուղերձով:

> *Մենք ջարդեցինք այն առասպելները, որոնք Հայաստանը երկար տարիներ փորձում էր ստեղծել աշխարհով մեկ, իսկ հայկական բանակին ներկայացրեցինք որպես վախկոտ բանակ:*

«Ցեղասպաններ, մարդասպաններ, ֆաշիստներ»

Ադրբեջանական քաղաքական և հասարակական խոսույթում հայ քաղաքական գործիչներին «ցեղասպաններ», «մարդասպաններ», և «ֆաշիստներ» որակելը դարձել է տարածված ռազմավարություն՝ ուղղված հայկական կողմին վարկաբեկելուն, Ադրբեջանի ներսում ազգայնական համախմբում ապահովելուն և միջազգային հանրության աչքերում սեփական գործողություններն արդարացնելուն: Այս հռետորաբանությունը հաճախ զուգորդվում է պատմական իրադարձությունների խեղաթյուրմամբ և զգայական մեղադրանքներով:

Հայկական կողմին մեղադրելով «ֆաշիզմի» կամ «ցեղասպանության» մեջ՝ ադրբեջանցի պաշտոնյաները փորձում են ամրապնդել հայ ժողովրդի հանդեպ բացասական վերաբերմունքը սեփական հասարակության մեջ: Սա նաև նպաստում է ներքին միասնության ամրապնդմանը՝ «համընդհանուր թշնամու» գաղափարի միջոցով: Այս խոսույթում շահարկվում են «ֆաշիզմի» և «ցեղասպանության» մասին համաշխարհային պատմական հիշողության մեջ գոյություն ունեցող բացասական ընկալումները:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը բազմիցս օգտվել է «ֆաշիզմի» և «ցեղասպանության» պիտակավորումներից՝ անդրադառնալով Հայաստանի նախկին ղեկավարներին և հայկական պետությանը: Նրա ելույթները ներկայացնում են հայ քաղաքական գործիչներին որպես «քրեական ռեժիմի» առաջնորդներ, որոնք, իբր, նպաստել են ադրբեջանական տարածքների «օկուպացմանը» ու «հանցագործությունների» իրագործմանը: Օրինակ, Ալիևը հայտարարել է, որ «Հայաստանը ղեկավարվել է ռազմական հանցագործների կողմից, ովքեր Խոջալուի ցեղասպանության մասնակիցներ են եղել»՝ շեշտելով, որ նման գործիչները պետք է պատասխանատվության ենթարկվեն:

Ադրբեջանի իշխանությունները հաճախ են օգտագործում «հանցագործ վարչակարգ» և

«ֆաշիստական ղեկավարություն» արտահայտությունները՝ հայ քաղաքական վերնախավին բնորոշելու համար: Հայաստանի քաղաքական ղեկավարներին «ֆաշիստներ» որակելը համակարգային բնույթ է կրում ադրբեջանական պետական հռետորաբանության մեջ: Ալիևը բազմիցս պնդել է, որ «Հայաստանը ֆաշիստական պետություն է», և որ «ադրբեջանական ժողովուրդը փրկել է հայ ժողովրդին հայկական ֆաշիզմից»:

Այս հռետորաբանությունը հաճախ ուղեկցվում է իրավական հետապնդումների նախաձեռնություններով, ինչպիսիք են միջազգային հետախուզումները կամ «հանցագործների» ձերբակալության կոչերը: Վագիֆ Խաչատրյանի գերեվարումը և ձերբակալությունը նմանօրինակ քաղաքական գործիք է, որը ցուցադրում է Ադրբեջանի՝ «հանցագործներին» պատժելու վճռականությունը:

«Հանցագործներ»

Ադրբեջանի իշխանությունների և քաղաքական գործիչների հռետորաբանության կարևոր բաղադրիչներից մեկը հայ քաղաքական գործիչներին և պաշտոնյաներին «հանցագործներ» ներկայացնելն է:

Նման որակումները ծառայում են մի քանի նպատակի՝ սկսած Հայաստանի և Արցախի ղեկավարների լեգիտիմության ապօրինացման փորձերից՝ մինչև հայ ժողովրդի ընդհանուր արժեզրկման քաղաքականությունը: Հայ քաղաքական գործիչներին «հանցագործներ» կոչելը նպաստում է նրանց քաղաքական լեգիտիմությունը հարցականի տակ դնելուն՝ ինչպես ներքին, այնպես էլ միջազգային հանրության աչքերում:

Այսպիսի որակումները ծառայում են ռազմական գործողությունների և այլ ագրեսիվ քաղաքական քայլերի արդարացմանը՝ ներկայացնելով դրանք որպես անհրաժեշտ պատասխան «հանցագործների» գործողություններին: Ադրբեջանցի քաղաքական գործիչներն այս հռետորաբանությամբ փորձում են ցույց տալ, որ իրենց ռազմական գործողություններն ուղղված են «խաղաղության վերականգնմանը»՝ իբր պայքարելով «հանցավոր ռեժիմի» դեմ:

Ադրբեջանական պաշտոնյաները, ներառյալ Ալիևը, պարբերաբար օգտագործում են «հանցավոր խունտա» արտահայտությունը՝ Արցախի նախկին ղեկավարներին կամ Հայաստանի իշխանություններին բնութագրելու համար: Նրանք այդ կերպ ոչ միայն ապօրինի են համարում նրանց ներկայությունը Արցախում, այլև հիմնավորում են Ադրբեջանի կողմից իրականացվող բռնի գործողությունները: Օրինակ, Ստեփանակերտում ռազմական շքերթի ժամանակ Ալիևը հայտարարել է, որ «կատաղած հանցավոր խունտայի ռեժիմը» վերջնականապես պարտության է մատնվել:

Ադրբեջանի հասարակական գործիչները հաճախ հղում են կատարում այն մտքին, որ

«հանցագործների պատժումը» նպաստելու է Հարավային Կովկասում «խաղաղության, անվտանգության և համագործակցության» հաստատմանը: Ջեյհուն Մուսաօղլուն[109], օրինակ, նշել է, որ «հանուն խաղաղության՝ անհրաժեշտ է ավազակային խմբերը մաքրել տարածաշրջանից»:

Հայ զինծառայողները՝ «դասալիքներ»

Ադրբեջանական պաշտոնյաներն ու փորձագետները հաճախ օգտագործում են «դասալիք» հասկացությունը՝ հայ զինծառայողների բացասական կերպար ձևավորելու նպատակով: Նման որակումները ներկայացվում են որպես հայոց բանակի անկարողության և բարոյալքվածության նշաններ՝ հակադրելով այն ադրբեջանական բանակի «բարձր մարտական ոգուն»: Այսպիսի բնորոշումները միտված են ոչ միայն հայկական կողմի հանդեպ արհամարհանքի ձևավորմանը, այլ նաև սեփական հասարակության մոտ հաղթանակի զգացում ամրապնդելուն՝ որպես ուժեղ և միասնական բանակի արդյունք:

1. Ռազմական փորձագետ Էդալեթ Վերդիևը[110] խոսել է Արցախն Ադրբեջանին բռնակցելուց հետո ադրբեջանական բանակի բարոյահոգեբանական վիճակի մասին:

Այժմ մեր բանակի բարոյահոգեբանական, մարտական ոգին բավական բարձր մակարդակի վրա է: Հայաստանի բանակը ջախջախված ու ջարդված է որպես 21-րդ դարի դասալիք բանակ:[111]

2. Միջազգային հարաբերությունների և դիվանագիտական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, քաղաքագետ, փորձագետ Սամիր Հումբատով:

Այսօր Հայաստանում 11000 դասալիքների առկայությունը ոչ մեկի համար կասկածելի կամ առեղծվածային խնդիր չէ: Դա պայմանավորված է նրանով, որ դասալքվածներն իրենք էլ լավ հասկացել են, որ Ղարաբաղն իրենց հողը չէ, և վաղ թե ուշ Ադրբեջանը հետ է վերցնելու այդ հողերը:[112]

109. Լրագրողների փորձագիտական կենտրոնի նախագահն է: Կենտրոնը կոչված է լրագրողական միջավայրում թափանցիկության ապահովմանը: Պետական ֆինանսավորմամբ մի քանի ծրագիր է իրականացրել, իսկ Մուսաօղլուն, որպես ՀԿ ղեկավար, մեկ անգամ պետական պարգևի է արժանացել:
110. Պահեստազորում գտնվող սպա է, մի քանի անգամ պարգևատրվել է Ալիևի կողմից:
111. https://yenisabah.az/ermenilerin-qazaxi-mehv-ederik-hedesine-bakidan-cavab
112. https://demokrat.az/az/news/157898/deputat-xacaturyanin-cinayetleri-meseli-camaatina-qarsi-soyqirimla-bitmir

3. Միլլի Մեջլիսի պատգամավոր Էլման Մամադովի հարցազրույցը՝ արցախցի Վագիֆ Խաչատրյանի գերեվարման և ձերբակալության լուրերի ֆոնին:

44-օրյա պատերազմի ընթացքում նրանցից ոմանք ձերբակալվել են, սպանվել են, ոմանք փախել են ու փրկել իրենց կյանքը: Կադրերում տեսանք, թե մարդասպան Խաչատրյանը ինչպես էր լուռ կանգնած Լաչինի անցակետում, նայում էր այս ու այն կողմ, ինչ-որ բան էր զգում, գիտեր, որ իրեն կբռնեն: Նրան քաջ հայտնի էր, որ իր գործողություններն անպատիժ չեն մնա:[113]

Հայերի «կեղտոտ» հետքը

Ադրբեջանական քաղաքական դիսկուրսում հաճախ հանդիպում են արտահայտություններ, որոնք ուղղված են Արցախում հայկական ներկայության ժխտմանը: Հայերին բնորոշվում են որպես «կեղտոտ հետք», որն անհրաժեշտ է «մաքրել»: Սա ոչ միայն պատմական ժառանգության ոչնչացման փորձ է, այլև մշակութային հիշողության վերացման քաղաքականություն: Նման հայտարարությունները ծառայում են տարածքային բռնակցումը արդարացնելու նպատակին՝ միաժամանակ հայերին ներկայացնելով որպես օտար և անցանկալի տարր ադրբեջանական հողերում:

1. Պատգամավոր Էլման Մամադովը՝ Արցախում ԱԺ շենքի քանդման մասին:

Մենք Ադրբեջանական հողերից քերում ու մաքրում ենք ձեր արմատները, հետքերը: Ինչպես դուք եք վռնդվել, գնացել, այնպես էլ կմաքրվեն ձեզնից մնացած կեղտոտ հետքերն ու ապօրինությունները:[114]

«Ծաղրածուներ»

Հայկական պետական և քաղաքական գործիչներին հաճախ տրվում են ծաղրական բնորոշումներ՝ նսեմացնելու համար նրանց հեղինակությունը և հեղինակազրկելու նրանց կարգավիճակը: Այս հռետորաբանությունը նպատակ ունի կասկածի տակ դնելու հայկական իշխանությունների լեգիտիմությունն ինչպես ներքին, այնպես էլ միջազգային մակարդակներում և նրանց ներկայացնելու որպես անլուրջ և ոչ արհեստավարժ:

113. https://demokrat.az/az/news/157898/deputat-xacaturyanin-cinayetleri-meseli-camaatina-qarsi-soyqirimla-bitmir
114. https://modern.az/olke/459478/xankendide-separatchilardan-qalan-butun-qanunsuz-tikililer-skulecek-fotolar/

1. Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը կնոջ՝ Մեհրիբան Ալիևայի հետ Ադրբեջանի Սալյան շրջան այցի ժամանակ հարցազրույց է տվել Ադրբեջանական հանրային հեռուստատեսությանը:

> *Անջատողականները, որոնք ներկայումս իրենց համար անուններ են հորինում. մեկը իրեն նախագահ է կոչում, մեկը՝ նախարար, մեկ՝ խորհրդարանի խոսնակ, ծաղրածուների այս խումբը վերջապես պետք է իմանա, որ չեն կարող խաղալ մեր համբերության հետ:*[115]

2. Պատգամավոր Էլման Մամադովը Արցախի հայաթափման և Ադրբեջանին բռնակցման օրերին Media Turk TV հեռուստաալիքի եթերում խոսել է Նիկոլ Փաշինյանի մասին:

> *Փաշիկ, այ անարժան ծաղրածու, դու ինչո՞ւ ես Հայաստանի բյուջեից անջատողական ռեժիմին 350 մլն դոլար օգնություն տալիս...:*[116]

Ադրբեջանական պաշտոնյաների և փորձագետների կողմից հայերի, նրանց մշակութային ժառանգության և բանակի նկատմամբ կիրառվող ատելության խոսքը և նվաստացնող բնորոշումները խախտում են միջազգային իրավունքի մի շարք հիմնարար սկզբունքներ և նորմեր:

Հայերին «վախկոտ», «թշնամի» «կեղտոտ հետք», «դասալիք», «ծաղրածու» և նման այլ բնորոշումներով պիտակավորելը նպաստում է թշնամանքի և խտրականության խորացմանը՝ վտանգելով խաղաղ գոյակցության հնարավորությունը:

«Շներ»

Իլհամ Ալիևը հայերին շների հետ համեմատել է 44-օրյա պատերազմի ավարտից անմիջապես հետո՝ 2020 թ. նոյեմբերի 10-ին՝ Ադրբեջանի ժողովրդին ուղղված ուղերձի մեջ, որտեղ, մասնավորապես, ասել է. *«Քշեցինք նրանց (հայերին – խմբ.) մեր հողերից, քշեցինք շների նման: Ես ասել եմ, որ մենք կքշենք, կքշենք շների նման և մենք քշեցինք, քշեցինք շների նման:»*[117]

115. https://president.az/az/articles/view/59451
116. https://www.youtube.com/watch?v=DLGI9BKprV4&ab_channel=MediaTurkTV 1:25
117. Обращение Президента Азербайджана Ильхама Алиева к народу, 10.11.2020, https://azertag.az/ru/xeber/obrashchenie_prezidenta_azerbaidzhana_ilhama_alieva_k_narodu_video-1638225.

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

1 Ադրբեջանում հակահայկական հռետորաբանությունը և հայերի նկատմամբ ատելության խոսքը պետական քաղաքականության մաս է կազմում: Այն տարածվում է պետական պաշտոնյաների, քաղաքական և մշակութային գործիչների, քաղաքագետների, լրատվամիջոցների միջոցով՝ հակահայկական տրամադրություններ ստեղծելու և հայերի նկատմամբ թշնամանք սերմանելու համար:

2 Ադրբեջանական ղեկավարության կողմից ատելության խոսքն օգտագործվում է ոչ միայն ներքին լսարանին մոբիլիզացնելու համար՝ արտաքին թշնամու կերպարի ստեղծման միջոցով, այլև միջազգային հարթակներում՝ Հայաստանի և Արցախի դեմ ուղղված գործողություններն արդարացնելու նպատակով: Ադրբեջանական կողմը, օգտագործելով «ռևանշիզմի», «անջատողականության», «ահաբեկչության» և զեկույցում ներկայացված այլ պիտակավորումները, նպատակ ունի միջազգային հանրությանը համոզելու, թե հայկական կողմի յուրաքանչյուր գործողություն սպառնալիք է տարածաշրջանի կայունության համար:

3 Հակահայկական հռետորաբանությունն ու ատելության խոսքն Ադրբեջանում խորը պատմական արմատներ ունեն: Թե՛ 1918-1920 թթ. գոյություն ունեցած Ադրբեջանի, թե՛ Խորհրդային Ադրբեջանի վարչակազմի քաղաքականությունը մշտապես ուղղված է եղել Արցախի բնիկ հայ ժողովրդի բռնի կամ «խաղաղ» տեղահանմանը՝ իրենց դարավոր հայրենիքից: Խորհրդային Ադրբեջանը ԼՂԻՄ-ում իր հակահայկական քաղաքականությունն իրականացրել է սոցիալ-տնտեսական, գիտակրթական և հոգևոր-մշակութային ոլորտներում՝ «փափուկ ուժի» գործադրման միջոցով նպատակ ունենալով փոխել ժողովրդագրական պատկերն Արցախում՝ հօգուտ ադրբեջանցիների:

4 Ադրբեջանի կողմից հայ քաղաքական գործիչներին և հայությանը որպես «անջատողականներ» որակելը ռազմավարական քարոզչության առանցքային մաս է, որը ծառայում է մի քանի հիմնական նպատակների.

4.1 Արցախի ինքնորոշման իրավունքի ժխտում. արցախահայությանը «անջատողականներ» պիտակավորելով՝ Ադրբեջանը փորձում է նրանց ներկայացնել ոչ թե ինքնորոշման իրավունքի սուբյեկտներ, այլ պետականության դեմ գործող ապօրինի տարրեր: «Անջատողական» պիտակը կիրառվում է միջազգային հարթակներում, որպեսզի Արցախի հայերի պայքարը ներկայացվի ոչ թե որպես ազգերի ինքնորոշման հարց, այլ որպես «պետության դեմ ապստամբություն»:

4.2 Հայաստանի՝ որպես «անջատողականության հովանավորի» ներկայացում. Ադրբեջանի հռետորաբանությունը չի սահմանափակվում միայն Արցախի հարցով, այլ

նաև Հայաստանի Հանրապետությանը ներկայացնում է որպես անջատողականության հովանավոր՝ վարկաբեկելով Հայաստանը միջազգային հարթակներում:

4.3 Էթնիկ զտումների և բռնի տեղահանումների լեգիտիմացում. Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի շրջափակումը և Արցախի հայերի բռնի տեղահանումը ներկայացվում է որպես «անջատողականության վերացում» և «տարածքային ամբողջականության վերականգնում»՝ այդ կերպ արդարացնելով միջազգային իրավունքի խախտումները:

5 Ադրբեջանը զարգացնում է «Արևմտյան Ադրբեջան» կոչվող կեղծ հայեցակարգը՝ պնդելով, որ Հայաստանի տարածքը «պատմական ադրբեջանական հող» է, Հայաստանի ներկայիս սահմանները ձևավորվել են «անարդար» կերպով, և անհրաժեշտ է «վերականգնել պատմական արդարությունը»: Այս գաղափարի քարոզչությունն ուղեկցվում է հայերի դեմ ուղղված ատելության խոսքով, ինչը փաստացի նշանակում է հայկական տարածքների նկատմամբ հավակնությունների ձևավորում և ագրեսիայի սպառնալիք: Պաշտոնական Բաքուն փորձում է միջազգային մակարդակում ներկայացնել հայերին որպես «պատմական անարդարության հեղինակներ»՝ այդպիսով արդարացնելով իր ապագա տարածքային հավակնությունները: Պատմական փաստերի խեղաթյուրման միջոցով Ադրբեջանը փորձում է ներկայացնել հայերին որպես «օտարներ»՝ սեփական հողում:

6 Հայաստանի՝ որպես «Արևմտյան Ադրբեջանի» տարածք ներկայացնելը նաև ուղղված է ադրբեջանական հասարակության մեջ հայերի նկատմամբ թշնամանքի արմատավորմանը: Այն դառնում է հասարակական կարծիքի ձևավորման հիմք, որտեղ հայերն ընկալվում են որպես ոչ թե հարևան ժողովուրդ, այլ «օկուպանտներ», «հակառակորդներ» և «թշնամիներ»: «Արևմտյան Ադրբեջան»-ը Ադրբեջանի հակահայկական և նվաճողական ծրագիր է, որի նպատակը Հայաստանի Հանրապետության տարածքի օկուպացումն ու ադրբեջանցիներով վերաբնակեցումն է: «Արևմտյան ադրբեջանցիների» վերադարձի պահանջը ոչ միայն նպատակ ունի առաջ մղելու պատմական հողերի վերադարձի գաղափարը, այլև խարխլելու Հայաստանի գոյության հիմքերը՝ ՀՀ տարածքում հաստատելով ադրբեջանական ներկայություն և իրավունքներ:

7 Արցախի երկրորդ պատերազմից հետո Ադրբեջանը տարածքային պահանջներ է ներկայացնում Հայաստանի նկատմամբ, որոնք ոչ միայն սպառնում են երկրի ինքնիշխանությանը, այլև Հայաստանի նկատմամբ քաղաքական և ռազմական ճնշման գործիք են հանդիսանում:

8 «Զանգեզուրի միջանցքի» ստեղծումը Ադրբեջանի կողմից ներկայացվում է որպես տնտեսական նախագիծ, սակայն դրա իրական նպատակը Հայաստանի ինքնիշխանությունը թուլացնելն ու տարածքային վերահսկողություն հաստատելն է:

9 Ադրբեջանի ղեկավարության հայտարարությունները, թե Զանգեզուրի միջանցքը «կստեղծվի՝ անկախ Հայաստանի կամքից», ուղեկցվում են իրական ռազմական սպառնալիքներով, ինչը ցույց է տալիս, որ Ադրբեջանը պատրաստ է ուժի կիրառմամբ առաջ մղել իր պահանջները:

10 Ադրբեջանի իշխանությունները նախկինում Հայաստանի տարածքում բնակված ադրբեջանցիների «իրավունքների վերականգնման» հռետորաբանությունն օգտագործում են որպես տարածքային պահանջների լեգիտիմացման գործիք՝ միևնույն ժամանակ իրենց ժողովրդին ներկայացնելով որպես պատմական զոհ:

11 Ադրբեջանի իշխանությունների մեկ այլ քաղաքականություն ուղղված է հայկական մշակութային ժառանգության պատմական ծագման խեղաթյուրմանը՝ ներկայացնելով այն որպես ադրբեջանական, ալբանական և/կամ յուրացված: Ադրբեջանական կողմն ակտիվորեն տարածում է այն գաղափարը, թե հայերը «օտար» են տարածաշրջանում, իսկ հայկական մշակութային ժառանգությունը՝ «գողացված» կամ «յուրացված» է: Հայկական մշակութային կոթողների ադրբեջանական կամ ալբանական ներկայացումը նպատակ ունի ժխտել հայ ժողովրդի հազարամյա ներկայությունը տարածաշրջանում:

12 Ադրբեջանի իշխանությունների մշակութային քաղաքականությունը ծառայում է ավելի լայն քաղաքական նպատակների: Նրանք պնդում են, որ իրենց մշակութային արժեքների «վերականգնումը» պետք է ուղեկցվի այդ արժեքների գտնվելու վայրերի՝ այսինքն՝ Հայաստանի տարածքների «վերադարձով»: Այս հռետորաբանությունը մշակութային խնդիրներից անցում է կատարում տարածքային պահանջների՝ ներկայացնելով այդ պահանջները որպես պատմական արդարության վերականգնման անբաժան մաս:

13 Հայկական եկեղեցիների, գերեզմանների, խաչքարերի, մշակութային և պատմական կոթողների ոչնչացումը, աղավաղումը կամ վերափոխումը ադրբեջանական պետության կողմից իրականացվող մշակութային ցեղասպանության մաս է կազմում: Միևնույն ժամանակ, հայկական մշակութային կոթողերի՝ որպես ադրբեջանական կամ ալբանական ներկայացումը «լեգիտիմացնում» է ադրբեջանական կողմի տարածքային պահանջները:

14 Ադրբեջանի պետական քաղաքականությունը նպատակաուղղված է ոչ միայն հայկական մշակույթի ժխտմանը, այլև՝ հայոց լեզվի վերացմանը:

15 Ադրբեջանական պետական պաշտոնյաները, քաղաքական գործիչները և մեդիան հայերին պիտակում են որպես «թշնամիներ», «վախկոտներ», «դասալիքներ», «ցեղասպաններ», «ֆաշիստներ», «հանցագործներ» և «շներ»՝ նպատակ ունենալով վարկաբեկել և նվաստացնել նրանց:

ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

1 Միջազգային կառույցների կողմից պետք է պարբերաբար գնահատվի և դատապարտվի Ադրբեջանում պետական մակարդակով տարածվող հայատյաց հռետորաբանությունը:

2 Միջազգային հանրությունը պետք է դիտարկի անհատական պատժամիջոցների կիրառումը Ադրբեջանի այն պաշտոնյաների նկատմամբ, որոնք խրախուսում ու տարածում են ատելության խոսքը հայերի նկատմամբ:

3 Անհրաժեշտ է անհապաղ և գործուն միջոցներ ձեռնարկել հայերի նկատմամբ պետական մակարդակով տարվող ռասայական խտրականության և ատելության խոսքի վերացման համար:

4 Միջազգային հանրությունը պետք է հստակ մերժի «Արևմտյան Ադրբեջանի» մասին ադրբեջանական քարոզչական թեզերը և նմանատիպ տարածքային պահանջների լեգիտիմացումը:

5 Միջազգային կազմակերպությունները պետք է հստակ արձանագրեն, որ Ադրբեջանի հայատյաց հռետորաբանությունը և տարածքային հավակնությունները սպառնում են տարածաշրջանային անվտանգությանը:

6 Հայաստանը կարող է դիմել Միջազգային քրեական դատարանում (ICC)՝ հիմնվելով Ադրբեջանի ռազմական հանցագործությունների, զանգվածային տեղահանությունների, էթնիկ զտումների և քաղաքացիական բնակչության դեմ կատարված հանցագործությունների վրա:

7 ՅՈՒՆԵՍԿՕ-ն և միջազգային ժառանգության պահպանման կազմակերպությունները պետք է ուժեղացնեն վերահսկողությունը հայկական մշակութային կոթողների պահպանման ուղղությամբ և դատապարտեն ու գործնական քայլեր ձեռնարկեն Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության ոչնչացման ու յուրացման դեպքերն արձանագրելու ու կանխելու համար: Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում մշակութային կոթողների պահպանությունն ապահովելու համար կարող է ստեղծվել միջազգային դիտորդական առաքելություն: